BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE S. LAZARE

№ 266 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 266

Տարեկան գինը 10 րուբլի. Կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական ՄԷԿ րուբլի։
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 րուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նոյեմբերի 28-ին վախճանվեց

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ,

որի մասին խորին վշտով յայտնում են նրա կինը և զաւակները։ Հոգեհանգիստը չորեքշաբթի, դեկտ. 2-ին, երեկ. ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, դեկտեմբերի 3-ին բնակարանից (Սեմենովսկայա № 23, բն. 6) առ. ժամը 10-ին, դէպի Վանքի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ցաւօք սրտի յայտնում են, որ նոյեմբերի 28-ին վախճանվել է դպրոցի նախկին տեսուչ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Ամբիծքը նշանակված է չորեքշաբթի, երեկոյեան ժամը 6-ին, հանգուցեալի բնակարանում՝ Семеновская № 23, кв. 6

881. 1—1

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ խորին վշտով յայտնում է բազմաշխատ մանկավարժ-ուսուցիչ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

մահը։ Ամբիծքը այսօր, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 6-ին հանգուցեալի բնակարանում (Семеновская ул. № 23)։

879. 1—1

Արշակ Յարութիւնեան, Կալիա Զալիբէգեան, Տրդատ, Աշխէն, Լիւսիա և Աբգար ՂՈՆԴԱՂՍԱՋԵԱՆՆԵՐԸ հոգեկան խորին վշտով յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջին երկուսն իրանց թանգագին դստեր, իսկ վերջիններս իրանց սիրելի քրոջ՝

ՌԱԻՍԱ ԱՐՇԱԿԵԱՆ ՂԵՒՈՆԴԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատեւ և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքն այսօր, դեկտեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, դեկտեմբերի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Մեռնիսկի պերէուլօկ, № 37) դէպի ս. Աստուածածնի (Կարմիր Աւետարանի) եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

877. 1—1

ԾՆՆԴԵԱՆ ԸՆԾԱՆԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունքին կից կազմված է Յանձնաժողով, որ պարտականութիւնն է հաւաքել ԸՆԾԱՆԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

ՈՒՂԱՐԿԷՔ ԲԻՍԱ-ՏՈՊՐԱԿՆԵՐ

ընծաներով։ Ցանկալի է՝ սապոն, ծխախոտ, գլանակ, թէյ, շաքար, սանր, թել, ծրարներ, թուղթ, մատիտ, չոր քաղցրեղէն, չորացրած մրգեղէն, տաք հագուստեղէն և այլն։

Բոլոր ընծաները անմիջապէս կուղարկվեն պատերազմական դիրքերը Քաղաքների Միութեան յատուկ լիազօրի միջոցով։

Ընծաները հասցէագրել Յանձնաժողովի հետեւեալ անդամներին.
1) Լ. Ն. ԼԵԲԵԴԻՆՍԿԱՅԱՅԻՆ (Օլգինսկայա փող. № 47, տէլ. 11—94)։
2) Գ. Ա. ՊԻՐԱՅԻՆ (Տախտինսկայա փող. № 10, տէլ. 15—39)։
3) Ն. Ա. ԲՈՒՏԿԵՎԻՉԻՆ (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տէլ. 16—58)։
4) Ա. Ա. ՉԵՐՆՈՅԻՆ (Տեխնիչեսկայա փող. № 2, տէլ. 5—73)։
5) Լ. Ե. ԵՐՄՕԼԱԵՎԱՅԻՆ (Ջաւալօվսկայա փող. № 13)։
6) Ե. Ա. ԲԻԼՕՅԻՆ (Բրոսսէ փող. № 3)։
7) Օ. Ս. ԲՈՒԿՇՏԵՅՆԻՆ (Օլգինսկայա փող. № 6, տէլ. 5—55)։

ԿԱՐԵԼԻ Է ՏԵԼԷՖՕՆՈՎ ԽՆԴՐԵԼ՝ ՄԱՐԴ ՈՒՂԱՐԿԵԼ ՏՈՊՐԱԿՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ.

Դատարկ քիսա-տոպրակներ կարելի է ստանալ Ն. Ա. Բուտկեվիչից (Օլգինսկայա փող. № 3, բն. 3, տէլ. 16—58)։

Կարելի է ուղարկել եւ անուանական տոպրակներ։

Կարելի է ընծան դրամով ուղարկել, այն է՝ 1 րուբլի, որով Յանձնաժողովը կը պատրաստէ լիքը տոպրակներ։

Համառուս. Քաղաք. Միութեան Կովկասեան Բաժանմունքի լիազօր՝ Ալ. ԽԱՏԻՍԵԱՆ
Յանձնաժողովի նախագահ՝ ԲՈՒԿՇՏԵՅՆ

առ. (օ. մ.) 860. 3—2

Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆՈՒՀԻ։
Դիմել Ընկերութեան գրասենեակ Абасъ-Абадская пл. д. № 7.
առ. (ու.) 876. 2—1

1915 Թ. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ
ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԹԻՖԼԻՍԻ I ՓՈԽԱՏՈՒ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ
(Վէրայի զաւիվայր, № 12)
Կը շարունակվի մինչեւ դեկտեմբերի 19-ը ս. թ.
880. Գրասենեակը բաց է երեկ. ժամը 6-ից մինչեւ ժամը 8-ը։ 1—1

Ժողովարանի դահլիճ
Հինգշաբթի, դեկտեմբերի 3-ին
Հայոց Դրամատիկ Ընկերութեան
ՀԱՅ ԴՐԱՄԱՏ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կաթուղիկէ ս. Գէորգ եկ.-դպրոցի
ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Կը ներկայացնէ
ՄԻՐՐԱ-ԷՖՐՈՍ
Դրամա 5 արար., Գօրդինի, թարգմ. ՄԱԺԱԿԻ
Մասնակցում են.—տ. տ. Աշխէն, Զաբէլ, Ժասմէն, Մարգարիտ, Սիրանոյշ, պ. պ. Ալիխանեան, Աւետեան, Մամիկոնեան, Միրզոյեան և ուրիշները։
Սկիզբն երեկոյեան ժամը 8-ին
Տեղերի գները 4 ր. մինչեւ 1 ր.
Ռեժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
878. 1—1

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ
Թոքատցի Յարութիւն Մըսըրեան, որ Սամսոնէն Բաթում գալով Սուխում մեկնած է, իսկ հիմա տեղը անյայտ։ Սոյն անձը ճանչցողները և տեղը գիտցողները կը խնդրուի բարի լինել հետեւեալ հասցէին լուր տալ.
Բաթում, Գէորգ Ազըլեան
Լօրիս-Մելիքովսկայա ուլիցա № 35.
առ. 864. 3 3

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ բացառապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7 ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 779. 50—28

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը $1^1/_2$-ից մինչեւ ժամը 3-ը։ Սերգիէեվսկայա փող. № 1. Տէլէֆօն № 16—67։
առ. 753. 50—35

Թիֆլիսից 10 վերստ հեռաւորութեան վրա գտնվող
Տաբախմելա գիւղում
նոր բացվող ՄԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է ՄԻ ՎՐԱՑԱԽՕՍ
ՎԱՐԺՈՒՀԻ
Պայմանների մասին դիմել պ. Նիկ. Մատինեանին՝ Ольгинская ул № 3, տ. Մելիք-Ազարեանցի, առաւ. ժամը 10—11-ը։
Հոգաբարձութիւն
առ. 873. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարան՝ի պրօֆ. Պօզնէրի
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սօլօլակ, Րտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆօն 10 58.
առ. (չ. ու. կ.) 806. 50—11

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաեւ խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաեւ ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՇԱՌԱՎԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
առ. (ա. օ.) 504. 100—100

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։
Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց բիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—83

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 նոյեմբերի

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ անգլիական մի սուզանաւ Իշխանաց կղզիների մօտ ջրասուզել է թիւրքաց մի ականանաւ։

Հաղորդում են, որ «Գեբէնը», դուրս գալով Սև-ծովը, ենթարկվեց մի սուզանաւի յարձակման և վնասվեց։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 նոյեմբերի

ԱԹԷՆՔ.—Դաշնակից զօրքերը շարունակում են կարգով դիմել դէպի յունական սահմանը։

ՓԱՐԻԶ.—«Մատէնը» գրում է. «Նոյեմբերի 28-ին Մերձաւոր Արեւելքում դաշնակիցները համերաշխ միաբանութեամբ առաջ են գնացել»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Սօլունից հաղորդում են, որ բուլղարական և թիւրքական հիւպատոսարանները իրանց հաշուին կազմակերպել են 500 կոմիտաջիներից մի հրոսակախումբ, որոնցից մեծ մասը թիւրքեր են։ Հրոսակախմբի նպատակն է անհանգստացնել անգլօ-ֆրանսիական զօրքերի թիկունքը։ Տեղի ունեցած մի ընդհարման ժամանակ թիւրքերը կորցրել են մեծ թւով սպանվածներ և վիրաւորներ։

ՍՕԼՈՒՆ.—Չը նայած բուլղարների կատաղի յարձակումներին ամբողջ նոյեմբերի 27-ի ընթացքում, դաշնակից զօրքերն անարգել ետ քաշվեցին դէպի նախորոշված դիրքերը։

Կռիւը վերսկսվեց նոյեմբ. 28-ին համարեա ամբողջ զօրաճակատի վրա։

Վերջին տեղեկութիւնների համաձայն, գերմանացիների և բուլղարների բոլոր յարձակումները չեզոքացված են կամ վանված են։

ՓԱՐԻԶ.—Մեր զօրքերը շարունակելով իրանց նահանջը՝ լոյս նոյեմբ. 28-ի գիշերը ետ քաշվեցին առանց կռուի՝ դէպի Սմօկվիցա-Դօյրան լիճը։

Նոյեմբ. 28-ին մենք վանեցինք մի քանի յարձակում։

ԼՕՆԴՕՆ.—Զինուորական մինիստրութիւնը յայտնում է.

Թշնամու կատաղի յարձակումից յետոյ աջողվեց ետ քաշվել դէպի Դօյրանի լիճը մինչեւ Վարդար։ Ի նկատի ունենալով տեղի լեռնոտ լինելը, հարկ եղաւ դնել 5 դաշտային թնդանօթ այնպիսի տեղում, որ նահանջի ժամանակ անկարելի էր վերցնել նրանց։ Մեր կորուստների քանակը կազմում է մօտաւորապէս 1,500։ Թշնամու ույժերը անհամեմատ գերազանց էին մերից։

ՍՕԼՈՒՆ.—Ամեն օր գալիս են անգլիական նորանոր զօրամասեր։

ԼՕՆԴՕՆ.—Դիւանագիտական աղբիւրից տեղեկացնում են Րէյտերի գործակալութեանը, որ մեծ պետութիւնները վճռել են դուրս չը հանել իրանց զօրքերն Սօլունից։

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից հաղորդում են, որ սերբիական զօրքի երեք դիվիզիա, որոնք նահանջել էին Ալբանիայի ուղղութեամբ, եկել են Էլբասան և Տիրանու առանց կորուստների։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Արեւմտեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։ Բօգինսկօյէ լճից դէպի արեւմուտք մեր զօրամասերից մինը, առաջանալով դէպի հակառակորդի թիկունքը, սուինային յարձակումով վանեց Վօյնիւնի գիւղից գերմանական մի կէսվաշտի, գերելով մի օֆիցէր, մի քանի զինուոր և ձեռք ձգելով մի գնդացիր։

ՓԱՐԻԶ. — Պաշտօնական։ հաղորդագրութիւն։

Բէլգիայում մեր հրետանիները մի քանի տեղ ստիպեցին թշնամու կրակին լռել։

Շամպանիում մենք ռմբակոծեցինք և աւերեցինք թշնամու խրամատները Տոսէն լեռան մօտ։

Վօգէզներում անընդհատ թնդանօթաձգութիւն է։ Ուժեղ մրրիկը այստեղ արգելք եղաւ ռազմի գործողութիւններին։

ՀԱՒՐ.—Բէլգիական հաղորդագրութիւն.

Բէլգիական զօրաճակատի վրա կատաղի թնդանօթային կռիւ էր։ Մենք աջողութեամբ պատասխանեցինք թշնամու կրակին, ցրեցինք թշնամու բանուորներին Դիկսմիւդէի մօտ և ռմբակոծեցինք գերմանացիների դիրքերը Դէնտանի մօտ։

ՀՌՕՄ. — Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Նոյեմբերի 29-ին մենք ձեռք ձգեցինք այն գագաթները, որոնք պաշտպանում են Բէցէկի աւազանի գրաւումը։ Մեր զօրամասերը զգուշութեամբ մօտեցան Լարգանօ շրջանում թշնամու ամրութիւններին։ Հետեւեալ օրը աջող թնդանօթային կռւից յետոյ մեր հետեւակ զօրագնդերը յարձակվեցին և ձեռք ձգեցին թշնամու դիրքերը և մի քանի շարք խրամատներ։

ՀԱՅ ԴԱՍԱԼԻՔՆԵՐ

Բուխարէստից հեռագրում են, որ Բօլգարիան յանձնեց Թիւրքիային 1100 հայ դասալիք զինուորների, որոնք, հաւանօրէն, կը գ՚ դակահարվեն։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 նոյեմբերի

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ. — Վիէննայից հաղորդում են, որ Վաշինգտոնի կառավարութիւնը պահանջել է ետ կանչել Նիւ-Եօրկից աւստրօ-ունգարական գեներալ հիւպատոսին։

ՓԱՐԻԶ.—Գրէյի և Բրիանի ստորագրած համանման հրահանգները ուղարկվել են Անգլիայի և Ֆրանսիայի՝ Աթէնքում պաշտօնավարող ներկայացուցիչներին։ Ժօֆֆրի և Կիտչեների ստորագրած ու համակերպված հրամանները ուղարկվել են Մերձաւոր Արեւելքում գտնվող ֆրանս-անգլիական զօրքերի հրամանատարներին։ Այդ միութիւնը արդէն ունեցաւ իր ազդեցութիւնը Աթէնքում։ Կոնստանտին թագաւորը համաձայնեց դուրս հանել իր զօրքերը Սօլունից, բացի մի դիվիզիայից։ Որպէսզի դաշնակիցներն ունենան գործողութիւնների ազատութիւն, երկաթուղագծերը կը յանձնվեն դաշնակիցների տրամադրութեանը, որոնց իրաւունք է տրված նաև նշանակել իրանց ծառայողներին։

Կարծում են, որ նոյնպէս արգելքներ չեն յարուցվի, եթէ դաշնակիցները նրանց համար դիրքեր ամրացնեն։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Սօֆիայից հաղորդում են.

Բօլգար կառավարութիւնը նշանակեց երկու գեներալ-տեսուչների. գեներալ Րաճկ

Պետրովին Մակեդոնիայի համար, և գեներալ Կուտինչևին Սերբիայի համար։ Երկուսին յանձնարարված է կազմակերպել նոր երկրների վարչական կառավարութիւնը։

Բօլգարիայից հաղորդում են, որ հասարակական կարծիքը պահանջում է դադարեցնել պատերազմական գործողութիւնները։ Անցեալ կիրակի օրը Թագաւորական պալատի առաջ սօցիալիստները կազմել են մեծ հակամիլիտարիստական ցոյց։ Ոստիկանութիւնը անզօր է եղել ցրել ամբոխը և պահանջել է հեծելազօր, որը և ցրել է ցուցարարներին։ Երկու կողմից կան շատ սպանվածներ և վիրաւորներ։

ԱԹԷՆՔ.—Անգլիական կառավարութիւնը թոյլատրեց Յունաստան ներմուծել 8 միլիոն տոնն քարածուխ։ Այդպիսով երկրի լուսաւորութիւնն ապահովված է։

ՍՕԼՈՒՆ.—Կայացաւ դաշնակից զօրքերի գեներալների և շտաբների ներկայացուցիչների երկրորդ և վերջին խորհրդակցութիւնը։

ՀՌՈՄ.—Պալատը 391 ձայնով ընդդէմ 40-ի լիակատար վստահութիւն արտայայտեց կառավարութեանը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Հրատարակվեց Միացեալ Պետութիւնների նօտան յանուն Աւստրիայի, «Անկօնան» ընկղմելու առիթով։

Նօտան պնդում է, որ շոգենաւը ընկղմվեց այն րօպէին, երբ նրա վրա կային ճանապարհորդներ և որ նա փորձ չարաւ փախչել սուզանաւից։ Հետևաբար սուզանաւի հրամանատարի վարմունքը հակասում է միջազգային իրաւունքին և մարդասիրութեանը։ Նօտան պահանջում է դատապարտել այդ վարմունքը, պատժել յանցաւոր օֆիցերին և բաւարարել նիւթապէս վնասված և վիրաւորված ամերիկահպատակների ընտանիքներին։ Նօտայի մէջ յոյս է յայտնված, թէ աւստրիական կառավարութիւնը, հասկանալով հարցի լրջութիւնը, անյապաղ կը կատարէ Ամերիկայի պահանջները։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.

30 նոյեմբերի

ՊԵԿԻՆ.—Ի պատասխանի ժողովրդական ներկայացուցիչների երկրորդ դիմումին, Իւանշիկայը նոր հրամանով յայտնում է, որ նա չէ կարող հակառակ գնալ ժողովրդի կամքին, որ միաձայն ընտրել է նրան կայսր. բայց անհրաժեշտ է գտնում թողնել առժամանակ ներկայ վարչական կարգը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մի քանի քաղաքային դումաներ, պատերազմական հանգամանքները նկատի առած, միջնորդում են, որպէսզի հաստատվեն քաղաքագլխի օգնականի պաշտօններ և աւելացվի քաղաքային վարչութիւնների անդամների թիւը։ Տեղական տնտեսութեան գլխաւոր վարչութիւնը, համակրութեամբ վերաբերվելով դէպի վերջին միջնորդութիւնը, բացասաբար է վերաբերում դէպի քաղաքագլխի օգնականի նոր պաշտօններ հաստատելը, որովհետև այդ կարելի է միայն օրէնսդրական կարգով. հետևաբար, ներկայումս հարցի սուր կերպարանքը չէ կարելի վերացնել։

Պետրօգրադի դատաստանական պալատը փոխեց «Нов. Вр.»-ի խմբագիր Սուվօրինի գործի առիթով նահանգական դատարանի վճիռը, որի համաձայն նա պէտք է բանտ նստէր 2 ամսով զրպարտութեան համար, և արդարացրեց Սուվօրինին։

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ.— Բուխարական երկաթուղագծի վրա մարդատար գնացքը խորտակվեց. սպանվեցին 3, վիրաւորվեցին 8 մարդ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. С.»-ին հեռագրում են. «Հալէպ-Մօսուլ զօրագծի վրա կենտրոնացել են մօտ կէս միլիոն մահմեդականներ։ Նրանց տեղափոխութիւնը կատարվեց գերմանական ծրագրի համաձայն, որի նպատակն է՝ շրջապատել Ռուսաստանի սահմանները մահմեդական ծովով։ Գերմանացիների կարծիքով, մահմեդականները պէտք է տան անսպառելի կենդանի ույժի աղբիւր, որի կազմակերպութիւնը գերմանացիք յոյս ունեն աւարտել մի տարվայ ընթացքում»։

◆ «Р. В.»-ին հեռագրում են, որ Շվէյցարիայի մի խումբ սօցիալիստներ դաշնակցական խորհրդին հարցապնդում են ներկայացրել, թէ մտադիր է, արդեօք, Շվէյցարիան մենակ կամ ուրիշ երկրների հետ միասին առաջարկել կռւող պետութիւններին իր ծառայութիւնները հաշտութեան պայմանները մշակելու վերաբերմամբ։

◆ Բարձրագոյն հրամայվել է դադարեցնել «Нов. Вр.»-ի աշխատակից Կնիւսինի գործը, որին մինիստրների խորհուրդը որոշել էր դատի ենթարկել այն լուրի տեղեկութեան համար, թէ իբր ռուս զօրքերը ափ են իջել Վառնայում։

◆ Համադանի նահանգապետը հեռագրով խնդրել է գեներալ Բարատօվին՝ հրամայել ռուս զօրքերին լինել զգոյշ և մոռանալ անցեալը։ Ռուսաց դեսպանը շնորհաւորեց շահին և մինիստրներին ընդհանուր թշնամու վրա տարած յաղթութեան համար։ Մեր զօրքերի առաջխաղացումը ունեցաւ իր խրատական հետևանքը։ Թէհրանի կառավարութիւնը այժմ դարձել է աւելի զիջող։

◆ «Рус. Инв.»-ը նկատում է, որ արտասահմանեան աղբիւրները մատնանշում են, թէ ինչքան էլ պատերազմը երկարի, ոչ մի երկիր չէ կարող դիմանալ աւելի լաւ, քան Ռուսաստանը, որը պատրաստվում է երկարատև պատերազմի, որովհետև, անկասկած, կարող է վարել այն։ Ռուսաստանը ունի սեփական մթերքներ, որոնք բաւական են զօրքի և ազգաբնակութեան համար։ Ունենալով 10 միլ. զինուոր պատերազմի դաշտերում, նա ունի բաւականին բանուոր ձեռքեր ռազմամթերք պատրաստելու համար և համարեա ամբողջ անհրաժեշտ հում նիւթը։

◆ Ամբողջ դաշնակից զօրքը բանակել է յունական սահմանի երկարութեամբ։

◆ Դիւանագիտական աղբիւրներից տեղեկացնում են, որ ուրբաթ օրը Յունաստանը Սալօնիկում պայմանագիր է կապել դաշնակիցների հետ վերջինների բոլոր պահանջների առիթով։ Դաշնակիցների ներկայացուցիչները խնդրել են մինիստր-նախագահից՝ անմիջապէս գործադրել պայմանագիրը։

◆ Կ. Պօլիս են եկել բօլգարական երկու հետևակ գունդ և շատ գերմանական արտիլերիա։

◆ Բօլգարները կատաղութեամբ ռմբակոծեցին Գեվգելին, որից դաշնակիցները հեռացել են։

◆ Մակենզենը մեկնել է Կ. Պօլիս հաշտեցնելու իրար հետ ընդհարված Էնվէր-փաշային և Թալէաթ-բէյին։

◆ Թէհրանից հեռագրում են, որ պարսիկ ապստամբ ժանդարմների թիւը 8000 է։ Ժանդարմների տարած զինապահեստը բաղկացած էր 18,000 հրացանից և 2 միլիոն փամփուշտից։

◆ Կանադայում 150 քաղաքներ ռազմամթերք են պատրաստում դաշնակիցների համար։ Պատուէրների գումարը հասնում է 400 միլիոն րուբլու։ Եկող տարվայ վերջին պատուէրների քանակը կը հասնի հաւանօրէն մի միլիարդ րուբլու։

◆ Բօլգարական արքայազն Բօրիսը ընդունում է կաթօլիկութիւն և ամուսնանում է աւստրիական արքիդքսուհի Ելիսավէտայի հետ։

TIMES-Ի ԱՐՇԱՒԱՆՔԸ

«Рус. Сл.»-ն Լօնդօնից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Համայնքների պալատում սէր Ջօն Սիմօնը կարդաց «Рус. Сл.»-ի Պարիզի թղթակցի հեռագիրը, որի մէջ դաշնակիցների դիպլօմատիայի անյաջողութիւնները Բալկաններում բացատրվում են մասամբ այն արշաւանքով, որ վարել են լօրդ Նօրդկլիֆի «Times» և «Daily Mail» թերթերը ընդդէմ անգլիական ներկայ կառավարութեան։

Սէր Ջօն Սիմօնը իր կողմից յայտնեց, որ կառավարութիւնը ներկայումս զբաղված է այդ հարցի ուսումնասիրութեամբ։

«Рус. Слово»-ի հեռագիրը սենսացիա է առաջացրել պալատում, և, ընդհանուրի կարծիքով, «Рус. Слово»-ն մեծ ծառայութիւն է մատուցել դաշնակիցների գործին այդ հարցը բարձրացնելով։

«Рус. Слово»-ի Պարիզի թղթակիցը իր հեռագրում հաղորդել էր հետևեալը.

«Աւագ մինիստր Վիվիանիի արած յայտարարութիւնը պալատում Բալկանեան գործերի առիթով, Ֆրանսիայում ընդունվեց ուրախութեամբ և թեթևութեամբ։

«Վերջին օրերը ռէակցիոն մամուլը զարգացնում էր այն նեղ-ազգային տեսակէտը, թէ իբր ֆրանսիական զօրքը պէտք է ծառայի միայն ֆրանսիական ռազմաճակատը պաշտպանելու։

«Միւս կողմից անգլիական այն լրագիրները, որոնք պատկանում են «լրագրային թագաւոր» լօրդ Նօրդկլիֆին, ինչպէս օրինակ, շատ տարածված «Daily Mail»-ը և «Times»-ը նոյնն էին քարոզում անգլիական զօրքի վերաբերմամբ։

«Times»-ի ռազմագիր գնդապետ Ռեպինգտօնի այն ցուցմունքը, թէ դաշնակիցները, որպէսզի չը ցրեն իրանց ույժերը, պէտք է Սերբիային յանձնեն սեփական բաղդի խնամքին, սաստիկ ծանր տպաւորութիւն թողեց Ֆրանսիայում, ուր ասպետական զգացմունքները միշտ կենդանի են»։

«Рус. Слово»-ի թղթակցի միւս հեռագիրը, որի վրա ըստ երևոյթին, մատնանշել է սէր Ջօն Սիմօնը, ասվում էր, որ «Times»-ի և «Daily Mail»-ի յարձակողական յօդուածները անգլիական կառավարութեան դէմ, գերմանացիները պրօպագանդայի նպատակով առանց որևէ բացատրութեան տարածել են Արևելքում։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թիւրք-պարսկական գործակալները, սըրբազան պատերազմ քարոզելով՝ մտել են Արդեբիլի գաւառը (սահմանակից մեր արևելեան Անդրկովկասին)։ Առաջ բերել խոշոր, Ռուսաստանին վտանգ սպառնացող ույժեր, նրանց, ի հարկէ, չաջողվեց։ Սակայն երկիրը ենթարկված է կատարեալ անիշխանութեան։ Ռուսաստանի և Գերմանիայի կողմնակիցները վարում են բացարձակ պարտիզանական կռիւ։ Նոյեմբ. 18-ին վերջացաւ երկու օր տևող արիւնահեղ ընդհարում Աստարայի երկու խաների միջև՝ Ռուսաստանի կողմնակից Րաշիդ-խանի և Գերմանիայի կողմնակից Հուսէյին-խանի։ Կռւում էին մի քանի հարիւր մարդ։ Յաղթեց Րաշիդ-խանը։

Խալխալի շրջանում և Արդեբիլի գաւառում երկու հարուստ եղբայր խաներ իրար հետ՝ կամախոհների խոշոր խմբերով՝ նոյն հողի վրա կռւի բռնվեցին, և կռւի վայրում թողին շատ սպանվածներ և վիրաւորներ։ Անիշխանութիւնը ծանր է նստում գիւղական խաղաղ ազգաբնակութեան վրա։ Խան եղբայրների ընդհարման ժամանակ աւերվեց տասը գիւղ։ Վնասվածները հեռագրել են ներքին գործերի մինիստրին՝ Թէհրան, խնդրելով նրա աջակցութիւնը անիշխանութեան վերջ տալու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՈՇՈՐ ՆՈՒԷՐ

Բագւում վախճանվել է ծխախոտային գործարանատէր Գէորգ Միրզաբէկեանցը։ Այդ առիթով մենք ստացանք հետևեալ հեռագիրը Բագուից, նոյեմբերի 30-ին.

«Վախճանվել է Գէորգ Միրզաբէկեանցը։ Նրա կինը և ժառանգները նուիրեցին Շամախու Թեմական դըպրոցին 125,000 րուբլի։

Ջաւէն վարդապետ

Գործակալ տէր-Ղևոնդ»

ՄԻ ՏԳԵՂ ՎԱՐՄՈՒՆՔ

Հ. Բարեգ. Ընկեր խորհրդի և Հայոց Հրատարակչական Ընկերութեան վարչութեան միջև տեղի է ունեցել մի միջադէպ, որ, պատիւ չէ բերում Բարեգ. Ընկերութեան պէս մի պատկառելի հիմնարկութեան վարիչներին։

Բարեգ. Ընկ. պատկանող շէնքերի մի նկուղի մէջ տեղաւորված է եղել Հրատարակչական Ընկերութեան գրքերի պահեստը—անգին քանակութեամբ գրքեր, առանձին-առանձին դասաւորված։ Բարեգ. Ընկ. խորհուրդը առաջարկում է Հրատ. Ընկ. վարչութեանը պարպել պահեստը, որ իրան հարկաւոր է. վարչութիւնը խոստանում է կատարել այդ պահանջը, հէնց որ կը գտնէ յարմար մի նկուղ կամ սենեակ՝ տեղափոխելու գրքերը։

Սակայն նա չի կարողանում գտնել յարմար սենեակ կամ նկուղ։ Եւ ահա Բարեգ. Ընկ. գրասենեակը ինքնագլուխ կոտրում է նկուղի կողպէքը և առանց Հրատ. Ընկեր. վարչութեան ներկայացուցչի մասնակցութեան, ինքն վարձում է մշակներ և բոլոր գրքերը խառն ի խուռն տեղափոխում է մի այլ նկուղ։ Հրատ. Ընկ. վարչութիւնը դիմում է ոստիկանութեան և կազմել տալիս արձանագրութիւն։ Հետևաբար պէտք է ծագէ դատաստանական վէճ հայկական երկու կուլտուրական հիմնարկութիւնների միջև։

Մեր վերաբերմունքը մինչև այսօր դէպի Հրատարակչական Ընկերութիւնը բացասական է եղել. սակայն չենք կարող ներկայ դէպքում ցաւ չը յայտնել, որ բնաւ կարիք չը կար Բարեգ. Ընկերութեան կողմից այդպիսի մի վիրաւորանք հասցնել մի Ընկերութեան, որ նոյնպիսի մի կուլտուրական հաստատութիւն է, ինչպէս Բարեգործականը։ Այսպիսի վարմունք կամ ինքնագլուխ արարք, որ է՝ կոտրել օտարի դռան կողպէքը՝ և բռնի կերպով տեղափոխել նրա գոյքը—անվայել արարք է։ Կարելի էր դիմել միջնորդների, յորդորներ կարդալ, վերջապէս դիմել դատարանին և ոչ այդպիսի տգեղ քայլ անել մի հասարակական և կուլտուրական հիմնարկութեան հանդէպ։

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ ԿՈՎԿԱՍԸ

«День» լրագրի մէջ լոյս են տեսնում Ավալիանիի մի շարք յօդուածները «Ի՞նչ է սպասում Կովկասը» վերտառութեամբ։

Առաջին յօդուածում խօսվում է ազգային յարաբերութիւնների սուր կերպարանք ստանալու մասին. դրանում մեղադրվում է կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը, որ իբր թէ երկիրը կառավարում էր յենվելով միայն մի ազգային խմբակի վրա։

Հեղինակը կարծում է, որ արմատապէս ազգային անջրպետը անկարելի է վերացնել, որովհետև այդ անջրպետը պատմական է. կարելի է միայն հարթել ազգութիւններ րի փոխադարձ սուր յարաբերութիւ Հեղինակի կարծիքով հնարաւոր է ն միջև որոշ հաշտութիւն մտցնել, բայ համար հարկաւոր է մեծ տակտ ու բա ցակամութիւն բարձր իշխանութեան մից, որպէսզի կարելի լինի հանգստ մտցնել յուզված շրջապատի մէջ։ Մի այդ շրջապատը թարմացնելով կար կուլտուրական արդիւնաւէտ աշխատան

Հեղինակը մատնանշում է զէմստվօյ դումաների դատարանի, բարձր կրթ հաստատութիւնների անհրաժեշտութի

Վերջում հեղինակը նկատում է, որ հրաժեշտ է յարգել երկրի կենցաղը ու զուն։

ՄԻՏՐՈՊՕԼԻՏ ՖԼԱՎԻԱՆԻ ԹՈՂԱԾ ՀԱ ՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՏԱԿԸ

Ինչպէս գիտենք հեռագիրներից, կ միտրոպօլիտ Ֆլավիանը, որ մի ժամ և Վրաստանի էկզարխ էր, վախճանվեց ջերս և նրա տեղ Կիևի միտրոպօլիտ նակվեց Պետրօգրադի և Լադօգի միտր լիտ Վլադիմիրը, որ նոյնպէս Վրաստ էկզարխ է եղել։ Նրա տեղ Պետրօգ միտրոպօլիտ նշանակվեց Վրաստանի կայ էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպ

Այժմ ռուս թերթերը հաղորդում են հանգուցեալ Ֆլավիան միտրոպօլիտը ցել է 650,000 ր. կարողութիւն, որից կենդանութեան ժամանակ գործադր 600,000 ր., հիմնելով հիւանդանոցներ, ղեցիներ և եկեղեցական մատենադարա իսկ մնացած 50,000 ր. կտակել է կ լավրին՝ դպրոցի և մատեն րանների համար։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Հ. Կենտ. կոմիտէի լիազօր Շարաֆ զեկուցումից երևում է, որ Ղազախի նում ներկայումս կան 2354 փախստա իսկ Նոր-Բայազէտում՝ 10,982։ Բժշկ գործը երկու շրջանում էլ վատ դրու մէջ է։

—

Բժ. Բաբալեան և Կալիժին Վանից ռագրում են Բաղ. Միութեան տեղ լիազօրին, որ Արդամեռում, Անգղ Ոստանում զգացվում են սննդատու կա ների և թէյարանների կարիք։ Այդ բ բանների և կայանների համար տեղ կայ և շէնք և հաց, միայն անհրաժեշտ թերքների համար կարելի է խանութ բ Վանում։ Հարկաւոր են նաև մօտ 10-ը նակիր ֆուրգօններ։

—

Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգ նշանակվել է Բաղաքների Միութեան գոր Սալմաստի շրջանում, գլխաւոր փախստականների գործի վերաբերմամբ

—

Պետ. Դումայի անդամ Միք. Պապաջ մեկնեց Երևանի նահանգը փախստական վիճակը ուսումնասիրելու։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ս. Թռանեկի գրութիւն

Կարս, 17 նոյեմ

Կեանքը դուրս է եկել իր սովոր բնական դրութիւնից։ Կենսական մթ ները տասնապատիկ գների հասան։ [illegible] չը կայ։ Սրան փոխար է բռնի ույժը և քմահաճութիւնը։

— Այս է գինը, չես ուզի, առ էլի գլխ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ ԿՈՏՈՐՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԸ ՄՈՒՇԻ ԴԱՇՏՈՒՄ

I

Համբարձման տօնից յետոյ, երբ Բուլանըխում գործերը խառնվեցին և հայերը պարտաւորված էին զէնքով իրանց գոյութիւնը պաշտպանել կամ փախչել դէպի Ռուսթէմ-Գեադուկ, ... կեանքը Մուշի դաշտում անտանելի էր դարձած։ Կ. Պօլսից բացարձակ հրաման էր հասած քիւրդ աշիրէթներին յատկապէս հայութիւնը բնաջնջելու ամբողջ Մուշի դաշտում և Տարօնի աշխարհում։

Քիւրդերը դեռ տատանվում էին, չէին ցանկանում ոչ թիւրք երիտասարդութեան՝ Մ. և Ա. կօմիտէին հակառակ գնալ, ոչ էլ իրանց կաթնատու-հայերից զրկվել։ Գուցէ իրերի ընթացքը այնքան սուր կերպարանք չը ստանար, եթէ Անթափի Պատոնց և շրջակայ գիւղերի տէրը՝ Բեօռ-Հիւսէյին փաշան 3—4000 ձիաւորով ռուսների ճակատամարտերից փախած և Մուշի լեռների քիւրդերի մէջ ապաստանած չը լինէր։

Մուշի դաշտի և շրջակայքի բոլոր հայկական գիւղերը իրանց մէջ բաժանած էին յայտնի աւազակապետ Մուսա-բէգը - կարմիր Համիդի աջ բազուկը Հայաստանի սըրտում—և նրա երկու եղբայրները Նըհօ-բէգը և Ղասըմ-բէգը։ Այս քիւրդերը ինչպէս ցանկանում էին տիրանալ Մուշի դաշտի սարահարթներին և շրջակայ ձորերին, այնպէս էլ ցանկանում էին տիրել ու գերել այդ երկրի վրա ապրող ֆըլահներին (հայերին), որպէսզի երկիրը մշակվի և իրանց հասոյթից չը զրկվեն։

Մինչ Կ. Պօլսից եկած գաղտնի հրամանների համաձայն Մուսա-բէգ պահանջում էր, որ Նըհօ և Ղասըմ բէգերը կոտորեն իրանց իւրացրած գիւղերի հայերին, վերջինները դիմադրում էին, առարկելով թէ նախ ինքը՝ Մուսա-բէգը կոտորէ տայ իր բաժնի հայերին, ապա իրանցից պահանջէ միևնոյն բանը կատարել։ Մուսա-բէգը արդարանում էր, առարկելով թէ իր թոռը (թոռնիկը) 8—10 տարի առաջ քիւրդացրել է իրանց գիւղերի հայերին, իսկ նորադարձ հայերը չեն կարող օգտվել այն արտօնութիւններից, ինչ վայելում էին նախկին կրօնափոխները, համաձայն Կ. Պօլսից հասած վերջին կարգադրութեան։

Որքան որ տքնեցին Նըհօ և Ղասըմ բէգերը իրանց աջակից Աբդիւլ-Մէջիդ քիւրդ բէգի հետ, չը կարողացան նպատակին հասնել, քանի որ Բեօռ-Հիւսէյին փաշան պահանջում էր անպատճառ անխնայ կատարել Մ. և Ա. կենտրօնական կօմիտէի հրահանգների համաձայն։ Իսկ Մուսա-բէգը անձաբացած՝ հրամայեց եղբայրներին անշուշտ կատարել վերին հրամանները։

Այս բանին աւելի նպաստեց ռուսական բանակի Ալաշկերտից Անթափ և ապա Մանազկերտ մտնելը։ Իրար ետևից յաղթական այդ առաջխաղացումները, Վանի անկումը, ռուսական զօրքերի Ոստան մուտքը, Բիթլիսի նեղ վիճակը, Խլաթի գրաւումը այնքան խոր տպաւորութիւն էր թողել, որ վերջապէս Նըհօ, Ղասըմ և Աբդիւլ-Մէջիդ քիւրդ աշիրէթ բէգերը իրանց ձիաւորները հաւաքեցին, զինվեցին, որ գնան կոտորեն ու ջնջեն հայ գիւղացիութիւնը Մուշի դաշտից։ Ամեն մարդ իր ձիաւորներով պիտի մաքրէր իր սեփականացրած սահմանները հայ ազգաբնակութիւնից, պիտի խլպառ ջնջէր ու կոտորէր անխնայ, որ բաւականացնի Կ. Պօլսի անսիրտ բռնակալներին։

Նըհօ, Ղասըմ և Աբդիւլ-Մէջիդ բէգերը իրանց 3000-ական ձիաւորներով, Բեօռ Հիւսէյին փաշան իր 4000 ձիաւորով և իր որդիների ու թոռների առաջնորդութեամբ 5000 հոգով իջան դաշտ, ամենքն իրանց սեփականացրած գիւղերը։ Հէնց այդ նպատակին հասնելու համար Բիթլիսի վալին և Մուշի միւթէսարրըֆը հասել էին դաշտը, որպէսզի խրախուսեն քիւրդերին շուտափոյթ կատարել արիւնռուշտ Մ. և Ա. կօմիտէի պահանջները։

Մուսա-բէգը ընդհանրապէս նստում էր դաշտի հարաւ-արևմտեան կողմը Բիթլիսի ճանապարհի վրա իր Խմէի սստանում, որտեղից կարգադրում էր ամեն բան։ Բայց երբ վալին, միւթէսարրըֆը հասան Մուշի դաշտը, նրանք ժողովվեցին Խաս-գիւղ, որը 500 տուն հայ ունէր։

Նըհօ-բէգը իր 3000 ձիաւորով անմիջապէս անցաւ դէպի Աչղաբիւր, որի շրջապատում գտնվում են Արքայ-վանք (90 տուն), Արագ (45 տ.), Հաւշատառ (50 տ.), Դրմերտ (120 տ.), Երիշտեր (120 տ.), Մշակ (80 տ.), Դեղձմեր (20 տ. հայ և 40 տուն քիւրդացած) և Վարդլուզ (20 տ. հայ և 50 տուն քիւրդացած) գիւղերը։ Հայերն արդէն վաղուց գիտէին, թէ ինչ են ծրագրում իրանց համար իրանց ոխերիմ դարաւոր թշնամիները՝ Կ. Պօլսի երիտասարդութիւնը և քիւրդական աշիրէթները։ Ուստի դեռ երեք ամիս առաջ ամեն մարդ իր պատրաստութիւնը տեսել էր, իրանց թանգագին իրերը թագցրել էին, թաղել էին։ Ով որ կարողացել էր՝ փախել էր ռուսական բանակը կամ լեռներն ու անտառները, իսկ համբերատար ժողովուրդն սպասում էր, թէ ինչ, երբ են գալու իրանց դահիճները իրանց մարտիրոսելու։

Վարդավառի օրը, երբ ժողովուրդը կատարում էր Աստղիկի լողացման և սառը ջրերի սրսկման տօնը, Նըհօ-բէգի քիւրդերը շրջապատեցին վերև յիշված գիւղերը. սկսվեց սոսկալի հարուածը։ Գնդակները շանթերի նման սուլում ու անցնում էին գիւղի վրայով, հանդի միջով, իսկ ժողովուրդը ամպի որոտից, փայլակ կայծակից ինչպէս որ պատսպարվում էր, այնպէս էլ պատսպարվեց քիւրդերի գնդակներից։

Քանի որ անկնկալված դիմադրութիւնը չը տեսան, էլ առանց գնդակ փչացնելու մտան գիւղերը և պահանջեցին զէնքերը։ Անշուշտ զէնք չը կար, որ տանէին, իսկ եթէ հայերը զէնք ունենային, քիւրդերը չէին յանդգնի յարձակվել այդ գիւղերի վրա և ոչխարի նման կոտորել, մորթել անմեղ երեխաներին, թշուառ կիներին, պառաւներին և ծերերին։

Քիւրդերը գոռում էին.

— Սասունն ապստամբվել է. դուք պատրաստվում էք անցնել Սասուն, օգնել մեր թշնամիներին։ Անձնատուր եղէք, եթէ չէք ուզում կոտորվել, գոռում էին՝ ամեն կողմ և մտնում գիւղերը։

Նըհօ-բէգը պաշարում էր Մրգիտ գիւղը, ուր 40 տուն հայ և 30 տուն քիւրդեր էին ապրում։ Անճարութիւնից՝ Մրգիտ գիւղի ժողովուրդը յանձն էր առել քիւրդանալու և իսլամն ընդունելու, բայց Նըհօ-բէգի խօս րից չը բաւականանալով լուր էին հասց ամեն տեղ, թէ քիւրդանալով չի կար փրկվել, պիտի ջարդեն, թող պատրաստ թիւն տեսնեն։ Բայց խեղճ ժողովուրդը պատրաստութիւն կարող էր տեսնել, նրանց բնակարաններից ոչ միայն սուր սամթը, այլ նոյնիսկ մանգաղը, գերա ու դանակը տարել էր թշնամին։

Արքայ-վանք գիւղի մէջ քիւրդական շէյխ մօլլա բարձրացաւ տանիքի վրա ւաքել տուեց բոլոր հայ ժողովրդին և բարձր ձայնով մունետիկի նման հրա կարդաց իսլամն ընդունելու և քիւրդան

— Ով որ քիւրդանայ,—գոռում էր լան, սրից կազատվի։

Բայց ոչ ոք չը խաբվեց, ամենքն էլ մոլված էին, որ դա մի նոր ծուղակ Յամենայն դէպս Յովհաննէս քահանայ Մկրտչեանցին ստիպեցին, որ խորհուրդ նէ և ստիպէ ժողովրդին քիւրդանալու։

Տէրտէրը ժողովականներին դիմելով ասաց.

— Աստուած էլ չի քննելու ձեր ուրացութիւնը, քանի որ նրան յայտնի ինչ պայմանների մէջ է կատարվել բանս։ Դուք գիտէք, ես մոլորվել եմ, խօսելու կարողութիւն չունեմ. ես ձեզ ձայնում եմ ամեն պատասխանատուութի Կուզէք մնացէք ձեր հաւատին ու մար րավեցէք, կուզէք առ երես քիւրդացէ ժամանակ ապրեցէք, մինչև ռուսները հաւարին հասնեն։ Նրանք Մանազկերտ Վան են, շատ որ ուշանան 15—20 օր գան ու կը հասնեն։

Նոյն գիւղացի Մելքոնի որդի Բենիամ

— կոպտութեամբ պատասխանում է վաճառաղը անողոքին։

Այժմ պէտք է շողոքորթել ղասաբին, հացթուխին, Չրկիրին։

— Աղա ջան, տուն գլխես։ Աստուծու խաթեր. ոտքդ պագնեմ։ Երկու սհաթ է բաքլայիմ կը, երկու գրվանքա հաց տուր,— արտասուքը աչքերին լացակումած աղաղակում է պառաւը։

Բայց աղա փռնչին իր հաշիւը ունի, դու ինչքան ուզում ես աղաղակի, ձեռք ու ոտքը համբուրի։ Հացթուխների դռների առաջ հարիւրաւոր մարդիկ ժամերով կանգնած հերթի են սպասում և շատ անգամ շատերը դատարկ վերադառնում են, որովհետեւ հացը հատաւ. «ով չուշտ, փորը կուշտ». ուժեղները հացը տարան, խեղճերը դատարկ վերադարձան։ Շատ անգամ առնողների համբերութիւնը հատնում է, առաջ է գալիս բռնի ույժը, հետեւանքը լինում է տուր ու դմփոց։ Այս խայտառակութեան առաջն առնելու համար փակում են դռները, լուսամուտից մի փոքրիկ ծակ են բաց թողնում և այդ ծակից փողը առնում, հացը դուրս տալիս։ Իսկ եթէ մանր փող չունես, կամ պիտի դատարկ վերադառնաս, կամ պիտի շատ առնես։ Բայց մինչև ե՞րբ։ Այսպէս ապրել չի կարելի. պէտք է փախչել քաղաքից. Բայց հե՞շտ է փախչելը. հազար ու մի տեսակ պատճառներ կան, որ կապում են մարդկանց ոտքերը և իրաւունք չեն տալիս հեռանալու տնից։

Ի՞նչ պատճառով առաջ է եկել այս անտանելի դրութիւնը։ Ոմանց կարծիքով՝ ալիւր չը կայ Կարսում, վագոն չեն տալիս որ ալիւրավաճառները մեծ քանակութեամբ ալիւր բերել տան։ Ոմանց կարծիքով՝ ալիւրավաճառները պահում են ալիւրը գաղտնի պահեստներում և սպասում են, որ աւելի թանգ գնով ծախեն։ Թէ առաջին և թէ երկրորդ պատճառներն էլ իրաւացի են։

Երանի՜ այն ժամանակ, երբ բազարից հաց առնելը մեծ ամօթ էր համարվում։ Իւրաքանչիւր տուն իր համար թոնիր ունէր։ Ամեն մարդ իր տարեկան «բնաղունը» տեսնում, աշնան պատրաստութիւնը վերջացնում, երկու-երեք ամսվայ համար հաց թխում, չորացնում, դարսում և առանց նեղութիւն կրելու ապրում։ Իսկ այժմ մեր տան տիկինները եւրոպացի են դառել, հաց թըխելը ամօթ են համարում և բոլորը բազարի հաց են ուտում։

Ս. Տէր-Մելքիսեդեկեան

Աղջիկ փախցնելը գիւղում

Նոր-շէն (Շուշ. գ.), 22 նոյեմ.

Երէկ գիշեր տեղի է ունեցել մի քամինելի դէպք հարեւան Աշան գիւղում։

Եմիշջան գիւղացի 46 տարեկան հասակն առած մի անձ, մօտ ժ. 9-ին, գալիս է Աշան գիւղը իր քրոջ հետ և փախցնում է իր հարազատ մօրաքրոջ կոյս աղջկան։ Մի քանի րոպէից յետոյ աղմուկ է ընկնում գիւղի մէջ. խեղճ գիւղացիները դիմում են հարեւան գիւղերը՝ դէպքի առիթով։ Միւս օրը պարզվում է ճիշդ եղելութիւնը։ Դէպքի մասին յայտնված է ոստիկանութեանը։

Տեղացի

Ջիվանշիրի լուրեր

Թարթառ, 24 նոյեմբերի

Հացի սաստիկ պակասութիւնը խիստ նեղ վիճակի է մատնել գաւառիս ժողովուրդը։ Քանի ժամանակ առաջ Տօնաշէն գիւղի հասարակութիւնը համախօսականով դիմել է Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեանը, խնդրելով իր հաշւով ցորեն բերել տալ (մինչև 2000 պուդ) մինչև Եւլախ կայարանը, որտեղից և իրանք սայլերով կը փոխադրեն գիւղ։

Բացի այդ, ի հետեւումն Օգոստափառ Փոխարքայի նախագահութեամբ տեղի ունեցած խորհրդակցութիւնների, Ջիվանշիրի գաւառապետը ևս գիւղական ներկայացուցիչների միջոցով տեղեկութիւններ կազմեց հացի կարիք ունեցող գիւղերի մասին և տեղեկագրեց ուր հարկն է՝ հաց բերել տալու և բաժանելու պահանջված գիւղերին՝ համաձայն կազմված ցուցակի։

Գիւղացիք օրէ-օր սպասում են գալիք հացին, որովհետեւ հացի գինը այս գաւառում ոչ թէ շաբաթներով, այլ օրերով է բարձրանում։ Այժմ ցորենի պուդը գնվում է 3 ր., այն էլ ձեռք չի ընկնում, իսկ ունեցողներն էլ պինդ պահում են, յուսալով որ աւելի թանգ գնով կը ծախեն։ Վերջապէս, եթէ խոստացված աջակցութիւնը չը հասնի, գիւղացիութիւնը անասելի տագնապի մէջ է ընկնելու մինչև առաջիկայ հունձը, որի ինչպիսի լինելն էլ անհնարին է գուշակել։

Եղանակները առ այժմ անցնում են միանգամայն չոր և արեւային, որպիսի հանգամանքը սարահարթի աշնանացանքի համար աննպաստ երեւոյթ կարելի է համարել։

Մենաօր-Միրաժ

Երեւանի գաղթականաց շուրջ

Երեւան, 24 նոյեմբեր

Գաղթականներու գրեթէ մեծ և տարաբաղդ մասը փող չունենալուն համար ցարդ կարողացած չէ առանձին տուներ վարձել քաղաքիս մէջ, քանի որ մէկ մի սենեակի վարձքը 5—15 ր. է ամսական, այն ալ ընդհանրապէս տարիով կը տրուի և կէսը վարձքն սկիզբէն կառնուի մեր խղճամիտ երեւանցի ազգայիններու կողմէն։

Կառավարութեան թոյլտուութեամբ այդպիսի չունեւոր գաղթականներն ապաստանած են քաղաքիս մի քանի կազարմաներու մէջ, ուր կը հոգացուին պետական գանձէն, տրուելով ամենուն անձ գլուխ օրական 2 ֆունտ մաքուր հաց, օրը մի անգամ մսեղէն կերակուր (սուպ, բորշ և այլն), շաքար, թէյ, լոյս, լուացքի տաք ջուր և այլն։ Ուստի կը հաւատամ, թէ ամբողջ շնորհընկալ գաղթականաց սիրտերէն խօսած կը լինիմ, երբ ըսեմ, թէ սրտանց շնորհակալ ու երախտապարտ ենք ռուս պետութեանն՝ իր ըրած այս շնորհքին համար։

Իսկ գալով Եղբայրական Օգնութեան նըպաստին, պէտք է ըսել թէ գաղթականաց այս մասը շատ քիչ օգտուած է անկից։ Այդ նպաստէն օգտուողներն եղած են առաւելապէս այն գաղթականները, որոնք առանձին սենեակներ վարձած կապրին հանգիստ։

Դարձեալ կազարմաներուն մէջ եղողներուն իբր կէսը գրեթէ հիւանդ կամ հիւանդկախ վիճակ ունին, բայց այնքան ատեն կանոնաւոր բժշկի այցելութիւնը վայելած չեն։

Այս հիւանդներն ալ թէև մէկ կողմէն հիւանդանոցներ կը տարուին, բայց շատեր անկէ կենդանի դուրս չեն եկեր, որովհետեւ հոն ալ կանոնաւոր խնամք չի տարուիր, ոչ ալ դեղ ու դարման կը գտնուի, ոչ ալ կանոնաւոր հիւանդապահ կայ։

Թողունք որ մինչև հիմա ալ վառարաններ չեն վառեր ու հիւանդները նոսր շալիկով մը ու նոսր վերմակով պատսպարուելով կը մսին ու շատեր սառը համար կը փախչին անկից կամ իրենց տէրերուն միջոցաւ տուն կը բերուին։

Արդ՝ ուր որ անկ է՝ կը բարձրացնենք մեր ձայնը և կը խնդրենք, որ շուտով վերջ տրուի այս թերութիւններուն, եթէ ոչ՝ մինչև առաջիկայ գարունը եթէ ամբողջ գաղթականաց կէսն ազատուելու լինի մահուան ճանկէն, շատ բան է։ Ո՛ն, շուտով թիւրք ու քիւրդի սուրերէն ազատուած այս խղճուկները ազատեցէք ներկայ աննպաստ վիճակէն։ Երբ մէկ կողմէն ալ ցուրտն օրէ-օր սաստկանալով, շատ ազատ մնացածները կը հիւանդանան և ապաքինածներն ալ կը կրկնեն իրենց հիւանդութիւնը աւելի սաստիկ աստիճանով։

Դէտ

սաց ժողովականներին.

— Ջուր է ուրացութիւն և ամեն ստորութիւն. նրանք եկել են մեզ ջարդելու և ջնջելու։

— Ջուր է,— ձայն տուեց ամբողջ գիւղը,— թող մեռնենք, բայց մենք չենք քիւրդանայ։

— Ինչի՞ խղճերս էլ ծանրաբեռնած մեռնենք,— ասաց նոյն գիւղացի Ցակոբ Ամիրեանը,— երբ կասկած չունենք, որ քիւրդ բայաթը մեզ հաստատ լուր է հասցրած, թէ գերման օֆիցէրներն անպայման պահանջ են դրել հայերին կոտորել, չը խնայել։

Անմիջապէս Արքայ-վանքի մէջ հայերին բաժանեցին ինչքան որ տղամարդ կար, 14—90 տարեկան, տարան լցրին երկու մեծ գոմ, մօտ 300 մարդ, իսկ 700-ի չափ կին՝ պառաւ, երեխայ, ջահել, հարս և գեղանի աղջիկներ լցրին երկու մարագ։ Նախ բոլոր հայ տղամարդկանց սպանեցին, որ իրանց պահած հարստութեան տեղը ցոյց տան։ Մտրակի հարուածներից տանջված, որի վէրքերից անհարկված շատերը գնացին և իրանց խորած, պահած ապրանքները յանձնեցին իրանց թշնամիներին։ Երբ պաճարը, պղնձեղէնը, գորգ, կարպետ և հագուստ տարան աւազակները, համոզվեցին, որ էլ ոչ մի թանգագին հարստութիւն չը մնաց հայերի մօտ, սկսեցին այրերի թևերը հաստ պարաններով թիկունքներին կապել։ Այս գործողութեան համար արդէն պատրաստված թոկ էին բերել հետները։

Ապա դուրս բերին մարագներից կանանց։ Նախ ջարդեցին բոլոր պառաւներին, անխնայաբար սրերը շարժելով։ Ապա քիւրդերի մէջ բաժանեցին բոլոր գեղահաս հարսներին և աղջիկներին։ Ամեն մի ձիաւոր, ամեն մի հրացանակիր իր ցանկացած գերին վերցրեց մատաղ և քնքոյշ սեռից։ Իսկ աւարը տարան Մըգիտ գիւղը, որպէս զի բաժանեն իրանց մէջ։ Եւ ծնողները, ամուսինները տեսան, թէ գազաններն ինչպէս բաժանեցին իրանց սիրելիներին և ինչպէս սպանեցին իրանց մայրերին։

Ցանկապէս բերված բոյաթ քիւրդերը հայերի եզների շալակին ու սայլերին բարձեցին գիւղի աւարը — ապրանքը, հարստութիւնը և գեղեցիկ սեռը — ու ճանապարհ ընկան դէպի իրանց ոբջերը։

Ապա տղամարդկանց դուրս բերին, բոլորի էլ թևերը թիկունքին, չորս-հինգ հոգի միասին կապած, և քշեցին դէպի Խմեր՝ Մուսա-բէգի ստանը, որ նա կատարէ իր վերջին վճիռը։ Թշուառ արարածներին քըշում էին ոչխարի հօտի նման, մտրակում և առաջ մղում։ Այս բոլորը կատարվում էր յարձակման երկրորդ օրը՝ Վարդավառի մեռելոցին։ Ինչ որ կատարվեց Արքայ-վանքում, նոյնը կատարվեց ամբողջ Մուշի դաշտում միեւնոյն օրը, միեւնոյն կերպով, և ամբողջ դաշտը սգաց այդ օրը։ Քիւրդերը տիրացան հայերի կանանց, աղջիկներին, գոյքին, պաճարին և հողերին. ոչ թէ տարան Խմեր՝ Մուսա-բէգի ապարանքը, այլ ճանապարհին կոտորեցին, ձորերը և խանդակները լցրին։ Գերված տղամարդկանցից գրեթէ ազատվող չեղաւ։ Կենդանի մնացին կանայք և մանուկները, այն էլ գերութեան մէջ, ուրացած իրանց պապերի լեզուն ու հաւատը։

Սա. պետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Փոխարքան հաստատել է քաղաքային դումայի որոշումը՝ քաղաքը եօթը մասի բաժանելու առաջիկայ քառամեակի համար իրաւասուներ ընտրելու։

◆ Կովկասի գերմանական կօլօնիաների գործունէութեան վրա հսկողութիւն նշանակելու և այդ վնասակար գործունէութեան առաջն առնելու նպատակով, և պատերազմական ժամանակն ի նկատի ունենալով, նախ քան գերմանական կօլօնիաների վրա կառավարական կարգ սահմանելը, որ նախատեսվում է օրէնքով գիւղական համայնքների համար, այժմեանից արդէն բոլոր կօլօնիաների վրա կարգվում է կառավարչական տանուտէր (старшина) և գրագիր, որոնց ռոճիկը պէտք է վճարի գաղութների ազգաբնակութիւնը և որոնց մօտ լինելու են ոստիկանական ստրաժնիկներ։

◆ Ինչպէս յայտնի է, Փոխարքայի նախկին օգնական սենատոր Ն. Լ. Պետերսօն մեկնում է Կովկասից և այդ պատճառով հրաժարվեց Կուրօրտային Ընկ. նախագահի պաշտօնից։ Այդ ի նկատի ունենալով՝ Ընկ. իր վերջին նիստում նրան ընտրեց պատուաւոր անդամ, իսկ նրա տեղ նախագահ ընտրեց Փոխարքայի նոր օգնական իշխ. Վ. Ն. Օրլովին։

◆ Քաղաքային վարչութիւնը Բաքու է ուղարկել քաղաքային առեւտրա-տնտեսական վերատեսչի օգնական Ս. Խարազեանին, որ սա այնտեղ գնի ազգաբնակութեան կարիքների համար անհրաժեշտ մթերքներ, ինչպէս օրինակ սոխ, գետնախնձոր և այլն։

◆ «Зак. Рѣчь»-ը յայտնում է, որ Վրաստանի էկզարխութեան թեկնածուներ են համարվում Վարշավայի արքեպիսկոպոս Նիկոլայը, Թիֆլիսի ուղղափառ հոգևոր սեմինարիայի նախկին տեսուչ՝ Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Սերգէյը և Տօբոլի եպիսկոպոս Վարնաւան։

◆ Այս ձմեռ Հասարակական ակումբը մտադիր է վերսկսել իր երաժշտական-գրական երեկոյթները։ Առաջիկայ շաբաթ օրը, դեկտեմբերի 5-ին, կը կայանայ այդպիսի երեկոյթներից մէկը, մասնակցութեամբ կայսերական թատրօնի յայտնի երգիչ Ամիրջանի և նրա աշակերտ-աշակերտուհիների։

◆ Մենք ստացանք անգլերէն մի նոր և նշանաւոր աշխատութիւն «Bahaism and its Claims», հեղինակութիւն Սամուէլ Գրօհամ Վիլսօնի, որ 32 տարի ապրել է Պարսկաստանում իբրև միսիօնէր և ունի մի այլ հեղինակութիւն՝ «Պարսկաստանի կեանքը և սովորութիւնները» վերնագրով։ Ամբողջ գիրքը բաղկացած է 12 գլխից և պարունակում է բաբիականութեան լիակատար պատմութիւնն ու նրա վարդապետութեան մեկնաբանութիւնը։ Գիրքը տպված է Նիւ-Եօրքում ներկայ 1915 թ.։

◆ Պետական վերջին փոխառութեան ստորագրութիւնը Թիֆլիսում տուել է 5.840,000 ր., Կիեւում 20.500,000 ր. և Րօստովում 5.500,000 րուբլի։

◆ Նոյեմբերի 30-ին Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը որոշել է հանգուցեալ Սեդրակ Մանդինեանի թաղման համար ուսուցչական ֆօնդից տալ 300 րուբլի։ Խորհուրդը իր ամբողջ կազմով ներկայ է լինելու թաղմանը։

◆ Նոյեմբերի 30-ին Թիֆլիսում ստացվեցին հետեւեալ մթերքները. ալիւր 79 վագոն, ցորեն 2 վ., վառելափայտ 15 վ., նաւթ 2 վ. և մազութ 9 վագոն։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

1914 թ. առաջին եօթ ամսում երկաթուղիներով փոխադրվել են 135, իսկ 1915 թ. 93½ միլիօն ճանապարհորդ։ Հասոյթը 21 միլիօնով պակաս է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Լանչխութում կազմակերպվել է մի խմբակցութիւն, որի նպատակն է հիմնել գիւղատնտեսական-գործնական դպրոց, որտեղ գիւղատնտեսութեան վերաբերեալ առարկաներ գործնականի հետ միասին կաւանդվեն թէ փոքրերի և թէ հասակաւորների համար։

◆ Վրաց Բարեգ. Ընկ. որոշել է հրաւիրել բժշկական յանձնախմբի ժողով և պարտաւորեցնել նրան ծրագիր մշակելու աջարցիներին բժշկական օգնութիւն հասցնելու նպատակով։ Այլ և որոշել է Աջարայում դեկտեմբերին մահմեդական վրացիների համար բանալ դպրոցներ զանազան գիւղերում։

◆ «Մեգօբարի» լրագրի ասելով՝ Րաճայի գաւառի Սխվավա գիւղացի Եր. Կատխաձէն հնարել է մի տեսակ կողպէք, որը բանալ կարող է միայն նա, ով կողպել է, և կամ նա, որին կողպողը նամակով կամ հեռագրով կը յայտնէ կողպէքի նշան գաղտնիքը։ Կատխաձէն ուրիշ շատ գիւտեր ևս ունի արած, բայց միջոցներ չունենալու պատճառով անկարող է լոյս աշխարհ հանել։

◆ Վրաց Բ. Ընկ. վարչ.-ը հետեւեալ որոշումներն է արել. 1) Նորին Բարձ. Տատիանա Նիկօլայեվնայի կոմիտէի միանուագ նուիրված 16,000 ր.-ով և ամսական յատկացրած 8000 ր. Ներքին և Վերին Աջարայում՝ Շավշէթում ու Իմէրխեւում մահմեդական-վրացիների համար հիմնել Ծինամձղվարիանթ-Կարիս գիւղատնտեսական դպրոցի տեսակի չորս դպրոցներ իրանց բաժանմունքներով։ Նոյն վրացի-մահմեդականների մէջ գաղթականների համար Կինտրիշ, Խուցուբան և այլ գիւղերում բանալ մի քանի գործնական դպրոցներ, որոնցում կը սովորեցնեն հիւսնութեան և ոստայնագործութեան արհեստներ և կաւանդվեն այգեպանութիւն, մեղուաբուծութիւն, բանջարաբուծութիւն և այլ ճիւղեր։

◆ Վրաց Բարեգործական Ընկերութեան վարչութեան նախագահ Գօթուան Ընկերութ. կից գոյութիւն ունեցող պարենաւորող մասնաժողովին ներկայացրել է մի զեկուցում, որից երեւում է, որ միայն Վրաստանի կարիքների համար կը հարկաւորվի 12 միլիօն պուդ պաշար։ Զեկուցանողը անհրաժեշտ է համարում գաւառներում ունենալ փորձառու գործակալներ և որ հարկաւոր է հիմնել գաւառներում պահեստներ։ Գօթուայի կարծիքով, այդ գործը կազմակերպելու համար կը պահանջվի 3 միլիօն րուբլի։ Մասնաժողովն այդ առաջարկը քննելուց յետոյ պէտք է միջնորդութիւն յարուցանէ կառավարութեան առաջ՝ առանց տոկոսի երեք միլիօն ր. փոխառութեան մասին։

◆ Վրաց Բարեգ. Ընկ. վարչութիւնը տեղեկանալով որ Գերմանիա-Աւստրիա գերի տարված վրացի զինուորների դրութիւնը շատ վատ է, որոշել է նրանց բարեկամների միջոցով նիւթական օգնութիւն հասցնել այդ գերի զինուորներին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական Ներկայացում

Արդէն յայտնի ճշմարտութիւն է, որ առհասարակ վէպերից փոխադրված պիէսները շատ ու շատ բան են կորցնում բնագրից և իրանց մէջ, մօտաւորապէս գոնէ, չեն ամփոփում վէպերի գլխաւոր տարրերը, չեն ընդգրկում տիպերն իրանց ամբողջութեամբ և հմայքով։ Այդպիսի պիէսները իսկապէս նմանվում են շուլալած շորերի, որ եթէ թելի մի ծայրից բռնես ու քաշես, ամբողջ կարը կը քանդվի իսկոյն։ Այդ պիէսներից են, օրինակ, Սենկևիչի «Քօ վադիս», մեր Րաֆֆի, վէպերից փոխադրած բոլոր անպէտք պիէսները և այլն։ Այստեղ չենք խօսում Շիրվանզադէի փոխադրած պիէսների մասին, որովհետեւ նրանք որոշ չափով զուրկ են այդ պակասութիւններից և բացառութիւն են կազմում։ Բացառութիւն կազմում են նրա համար, որովհետեւ նրանք կատարված չեն «վարպետի» ձեռքով, այլ իրա՝ հեղինակի, և, որ գլխաւորն է, Շիրվանզադէն տեղ-տեղ նոր է ստեղծագործել նրանց։

Վերև յիշված շուլալած պիէսների թւին է պատկանում նաև Դօստոեվսկիի «Ապուշի» փոխադրութիւնը։

Ով որ կարդացել է «Ապուշը», նա, ի հարկէ, կը զգայ ու կը տեսնի, թէ ինչ է մնացել այն մեծ վէպից այս պիէսի մէջ։

Երբ ես տեսայ «Ապուշի» ներկայացումը, մեղքս ինչ թագցնեմ, ինձ թւաց թէ վաղեմի, հարազատ ու շքեղ պալատէցի տեղ, ես տեսնում եմ քանդված ցանկապատ և ջարդված ու չորացող ծառեր, որոնց մերկ ճղներն աղմկում է անխրաւ քամին։

Այս վերաբերում է, ի հարկէ, պիէսի փոխադրութեանը. այժմ դառնանք նրան, թէ ինչպէս խաղացին «Ապուշը» մեր դերասանները։

Եւ, պէտք է ասած, մեր դերասանները, մի քանի պակասութիւններ մի կողմ թողած, պատուով դուրս եկան այդ երեկոյ, ի հարկէ, ոչ թէ խմբովին, այլ առանձին-առանձին։ Այսպէս, օրինակ, մէկին աջողվում էր տալ ռուսական ոգին, խաղն էր պակասում (Սեւումեան Ռագօժին), միւսները խաղում էին լաւ, մտածված, բայց ռուսական առանձնայատուկ ոգին ուժեղ կերպով էր շեշտվում (Աբէլեան—գեներալ Իվօլգին և Սիրանոյշ Նաստասիա Ֆիլիպօվնա)։ Տիպիկ գեներալ էր Միրզոյեան (Եպանչին), Մամիկոնեան (Ֆերդիշչենկօ) իր իսկական դերի մէջ էր։ Սա ամեն բանով յիշեցնում էր կատարեալ ռուսի։ Ադեան (Լեբեդեվ) աւելի լաւ կը լինէր, եթէ չափազանց ծամծմութիւնների չը դիմէր։ Միւսները խաղում էին մի կերպ և առանձին առաւելութիւններով աչքի չէին ընկնում, բացի պակասութիւններից։

Այժմ գանք պիէսի կենտրօնական անձին, իշխան Մըշկինին, որի դերը կատարում էր պ. Ալիխանեանը։

Դեռ վաղուց լսել էի, որ պ. Ալիխանեանը լաւ Մըշկին է խաղում, բայց չէի տեսել։ Եւ այդ երեկոյ, երբ տեսայ «Ապուշի» ներկայացումը, ես համոզվեցի, որ Ալիխանեանը իսկապէս լաւ Մըշկին է։

Պ. Ալիխանեանը շատ լաւ է ուսումնասիրել իր դերը։ Նա իսկ և իսկ Դօստոեվսկիի «Ապուշն» է. պարզամիտ, մեղմ ու բարի։ Այդ երեկոյ վէպի համը տալիս էր միայն նա։

Ալիխանեանը, որ, ինչպէս յայտնի է, լաւ-կան տեղ ունի և մելանխօլիկ տեմպերամենտ, շատ համապատասխանում է իշխան Մըշկինի դերին։

Լաւ էր նա այն տեղում, երբ միամտաբար բացատրում էր Գաւրիլա Արդալիօնօվիչին (Մանուէլեան), թէ ինքը ինչի մասին է խօսել Եպանչինի ընտանիքի հետ, և այն տեղում, երբ գեներալ Եպանչինին ցոյց էր տալիս իր ձեռագիրը և բացատրում նրանց տեսակները։ Իսկ շատ լաւ էր նա այնտեղում, երբ Նաստասիա Ֆիլիպօվնային ասում է, որ ինքը կը սիրի նրան, և յետոյ, երբ ընկնելով վառարանի մէջ այրվող թըղթադրամները ազատողների առաջ, ասաց.

— Թողէք այրվեն, որովհետեւ ամեն չարիք փողից է ծնվում։

Բայց նա մի քիչ սառն և թոյլ էր IV գործողութեան առաջին մասում. սակայն այս փոքրիկ պակասութիւնը նսեմանում է նրա շատ առաւելութիւնների առաջ։

Վերջացնելով մեր խօսքը, նկատենք բեժիսօրական մի պակասութիւն։

Եթէ պիէսը ռուսական է, պէտք է որ ամեն ինչ էլ լինէր ռուսական, և զգեստը, և շարժ ու ձևերը և վերջապէս, ամենագլխաւորը, գրիմը։ Բայց արի տես, որ պ. բեժիսօրը շատ քիչ հոգ էր տարել գրիմի վրա։ Նա ստատիստների դերերում բեմ էր հանել մարդիկ, որոնք իրանց ճխլված շորերով, սև մազերով ու սև միրուքներով աւելի շուտ յիշեցնում էին հայոց վարժապետների և բնաւ ռուս մարդկանց։

Ս.

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Ինչպէս յայտնի է, երրորդ անգամն է, որ պ. պ. Ղազարեանի և Սարդարեանի կազմակերպած համերգը տրվեց շաբաթ, նոյեմբ. 28-ին, Ժողովրդական Տան բեմի վրա։

Որովհետեւ չափազանցութիւնների հանդէպ լռելը յանցանք է, ուստի կը կամենայինք մի քանի խօսք ասել այդ առիթով։

Մենք չը զլացանք միշտ էլ ներկայ լինելու համերգներին և միշտ էլ լռեցինք, յուսալով որ յաջորդաբար լաւ կը լինի և համերգի ղեկավար պարոնները կաշխատեն բաւարարել հասարակութեան էսթէտիկական պահանջը և, որ գլխաւորն է, կը զարգացնեն մանուկների էսթետիկական ճաշակը։

Սակայն աղմուկն ու ղալմաղալը աստիճանաբար աւելի կրկնապատկվեցին, և մեր առաջ համերգ կոչված հաւաքոյթը հանդէս եկաւ իբրև սովորական դասամիջոց, իբրև մի կատարեալ քաօս։

Մի բան ևս չը մոռանանք ասելու, որ ծրագրում դրված 14 երգն էլ պատկանում էին Ղազար-Սարդարի գրչին (բացառութեամբ երկու լաւ երգի, որոնք պատկանում էին Ա. Տէր-Ղեւոնդեանի և Ա. Մանուկեանի գրչին և որոնք փչացան)։

Մնացած երգերի մասին աւելորդ ենք համարում խօսել, որովհետեւ բոլորն էլ շաբլօն ու թխած բաներ էին, որոնցից մէկը միմիայն աչքի էր ընկնում իր րիթմական տեսակէտով, և որը ժողովրդական երգ է և ի զուր է պ. Սարդարեանը սեփականացրել։

Իսկ «Անգործ մանուկ» օպէրա կոչվածի մասին պէտք է ասենք, որ նախ օպէրա չէ և երկրորդ՝ երաժշտական ոչ մի արժէք չունի։ Դա մի փոքրիկ պատկեր է, որի նիւթը առանց թխված երաժշտութեան էլ հետաքրքրական է։

Ինչպէս լսում ենք, պարոնները պատրաստվում են խեղճ դպրոցական երեխաներին առնել և ընկել կլուբները։

Բայց հետաքրքրական է իմանալ, թէ ինչ է մտածում դպրոցների մանկավարժական խորհուրդը։

Stretto

ՄԱՄՈՒԼ

«Վան-Տոսպ» շաբաթաթերթը, որ, ինչպէս յայտնեցինք, սկսել է հրատարակուել նոյեմբերի 28-ից, իր առաջին համարի խմբագրական յօդուածի մէջ այսպէս է [illegible] գազանների ըլկանքներին ենթակայ, մեր պապերի շիրիմները, մեր ազգային սրբութիւնները, մեր մտքի դարաւոր ստեղծագործութիւնները սրբապղծվել, անարգվել ու խորտակվել են այնտեղ, բայց ապրում է հայը, ապրում են նրա խոշոր զանգուածները, մեծ ու փոքր հատուածները այստեղ՝ Մեծն Ռուսաստանում, երկրագնդի զանազան կենտրոններում, և ապրում է հայութիւնը միլիօնաւոր իր զոհերի բողոք-հառաչանքներից ցնցված՝ մինչև իր հոգու խորքը, ապրում է նա գերագրգիռ յոյզերով ու մտքերով տոգորուն։

Այդ յոյզերի և մտորումների թելադրութեան մէկ արտայայտութիւնն է «Վան-Տոսպը», որի նպատակը լինելու է հրդեհվող հայրենիքի մոխիրների տակից լսվող տառապանքի ճիչն ու բողոքը հասցնել ապրող հայութեան և նրա բարեկամների ու թշնամիների մտքին ու սրտին։

«Վան-Տոսպը» իբրև ծնունդ թիւրքահայ իրականութեան և իբրև հաւատարիմ աւանդապահ դեռ մինչև երէկ Վանում հրատարակվող «Վան-Տոսպին»՝ թիւրքահայութեան ձայնը, նրա տառապանքների հայելին, նրա տենչանքների արձագանքը պիտի լինի։

«Վան-Տոսպի» մտասեւեռման կենտրոնը ընդհանրապէս մեր ազգային կեանքը և մասնաւորապէս թիւրքահայ հարցը պիտի լինի։

Մի այլ յօդուածի մէջ, «Օգնութիւն և հաշւետւութիւն» վերնագրով, նոր շաբաթաթերթը պահանջում է լայն հաշւետւութիւն բոլոր այն մարմիններից, որոնք դրամներ են հանգանակել յօգուտ թիւրքահայ փախստականների և նպաստել նրանց։

Տխուր, շատ տխուր լուրեր կը շրջին փախստականներու ենթարկուած վիճակի մասին։ Չենք կրնար մանրամասնութեանց մէջ մտնել առայժմ։ Կը բաւէ ամփոփումը միայն ներկայացնել տարաձայնութիւններու և ամբաստանութիւններու, որոնք դառնութեան մթնոլորտ մըն են ստեղծած փախստական արդէն խիստ խոցուած ու մտատանջ շրջանակներու, իսկ անվստահութեան մթնոլորտ մը հանրային մտքին մէջ։

Օգնութեան գործին ներքին անցուդարձերուն տեղեակ անձանց կողմէ կը պնդուի, թէ փախստականներու մէջ պատահած հիւանդութեանց ու համաճարակներու և հիւծումներու ամենամեծ մասը արդիւնք են առողջապահական խիստ աննպաստ պայմաններու, ուր դրուած են անոնք, թէ հիւանդներու ընծայուած բժշկական անբաւարար դարմանները անօգուտ կը մնան՝ սնունդի պակասութեան և բնակարանի վատառողջութեան պատճառով, թէ գիւղերու խուլ անկիւններու մէջ օրէ-օր հիւծող ու մեռնող այրերու ամբողջական թիւը շատ ալ պակաս չի մնար սեպտեմբերեան համեմատութիւններէն և թէ վաղուց ձմրան խստութեանց այսպէս անպատրաստ վիճակով դիմագրաւել ստիպուող գաղթականութիւնը կոտորակուած թիւ մը միայն պիտի ներկայացնէ գարունը։ Կը պնդուի, թէ գաղթականներու յատկացուած պետական նպաստները և հայ նպաստաբաշխ ընկերութեանց խողովակին մէջէն հայ ազգին ընծայաբերումները եթէ [illegible] մատակարարուէին, կարող էին անոնք բաւարարել սննդական ու բժշկական և պատսպարման բոլոր էական պէտքերուն, բայց թէ կողմնակի ճանապարհներով կը մսխուի անոնց կէսէն աւելին և մնացած կէսը հազիւ կը հասնի բուն նպատակին։ Ամբաստանողներ կան — և շատ-շատեր են այսպիսիք — թէ գաղթականական գործին համար իրապէս պահանջուած պաշտօնէից թիւէն շատ աւելի բարձր թուով մարդիկ պաշտօնի կոչուած են պարզապէս ապրուստի միջոց մը հայթայթելու համար անոնց, թէ խտրական ոգւով կատարուած են ընտրութիւնները և սահմանուած ռոճիկներ՝ նոյն այդ պաշտօններ մերժելով ինտելիգենտ փախստականներու, որոնք աւելի արժանաւորութեամբ և աւելի համեստ ռոճիկներով ու աւելի սրտացաւ բարեխղճութեամբ կարող էին ստանձնել զանոնք։ Եւ ինչ որ ամենէն սարսափելին է, կը պնդուի, թէ ամենէն խայտառակ չարաշահութիւններ, զեղծումներ ու գողութիւններ տեղի կունենան շատ պաշտօնեաներու կողմէ, որոնց վրայ ոչ մի իրական կօնտրօլ չկայ և ոչ մի պատասխանատուութեան ենթարկում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 նոյեմ.

Խնդրում եմ՝ յանուն ճշմարտութեան տեղ տալ նամակիս ձեր թերթում։

Թիֆլիսի երկրորդ հայ օրաթերթի №№ 266-ի և 268-ի մէջ «Հայերը Ամերիկայում» վերնագրով երկու կտորներ կարդացի, որ վստահ եմ թէ պ. Ս. Վրացեանը չը պիտի գրէր, եթէ ամերիկահայ թերթերը մուտք ունենային այստեղ, որովհետև նրա հետ միասին կովկասահայութիւնն էլ պիտի տեսնէր, թէ ինչպիսի երկդիմի դեր է կատարում պ. Ս. Վրացեանի գրիչը՝ ամերիկահայութեան մէջ սերմանելով անհամերաշխութեան ու բաժանումի որոմներ և համերաշխութեան քարոզներ՝ այստեղ, Կովկասում...

Լինելով ամերիկահայութեան մի անդամը և ծանօթ՝ նրա կեանքի բոլոր կողմերին, ես ինձ իրաւունք եմ համարում մի քանի խօսքերով ուղղել նրան վերագրված մի քանի փաստերի և իրողութիւնների սխալ դասաւորումը, որ պ. Ս. Վրացեանը, չը գիտեմ ինչ նպատակով, գլխիվայր է տեղաւորում վերոյիշեալ թերթի էջերում։

Մեր համազգային ճգնաժամի հանդէպ ամերիկահայութեան մէջ տեղի ունեցող անհամերաշխութեան պատասխանատուութեան իսկական տեղը ցոյց տալու պատրուակի տակ՝ պ. Վրացեանը հրապարակ է գլորում մի հսկայական սուտ հետևեալ գոյնով։ «Ազգային Բիւրոյի կողմնակիցները ամերիկահայութեան մեծամասնութիւնն են կազմում և գլխաւորաբար պատկանում են աշխատաւոր դասին. Նրանց արտայայտիչն են հանդիսանում «Հայրենիք»... և «Ասպարէզը»։ Միւս կողմը բաղկացած է հին և նոր հնչակեաններից, սահմանադիր-ռամկավարներից, լուսաւորչական և բողոքական եկեղեցիների հոգաբարձութիւններից, Եգիպտոսի Բարեգործականի անդամներից, միացած «Ազգային Պաշտպանութեան Յանձնախումբ» անուան տակ։ Այս կողմի բերանն են հանդիսանում «Ազգ», «Պահակ», «Երիտասարդ Հայաստան» և «Կոչնակ» թերթերը»։

Եթէ պ. Ս. Վրացեանը մեզ հասկանալի պատճառներով քաշվում է պարզ ասելու, ես կասեմ, որ Բիւրոյի կողմնակիցները միայն դաշնակցականներն են, այլ ոչ թէ ամբողջ «աշխատաւորութիւնը», այն էլ ոչ աւելի քան 2000 հոգի, որոնց բերանն է Հ. Յ. Դ. կիսապաշտօնական օրգան «Հայրենիքը» և նրա քոյր «Ասպարէզը»։ Եւ եթէ 100,000-ից բաղկացած ամերիկահայ գաղթականութիւնից բաժանէք 2000 հոգու չափ մի ափ մարդիկ, արդեօք այդ մեծամասնութիւն կը նշանակէ։ Այսպիսի պարզ հաշիւը գլխիվայր ցոյց տալը տարօրինակ է երևում ինձ։

Իրողութիւնն այն է, և նոյնիսկ պ. Ս. Վրացեանն ասում է, թէ Ամերիկայի հնչակեանները, վերակազմեալները, սահմանադիր-ռամկավարները, լուսաւորչական և բողոքական համայնքները, Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միութիւնը միացած՝ իրանց չորս թերթերովը միասին եկած կազմել են «Ազգ. Պաշտպանութիւն» անունով հսկայական մի մարմին, որից դուրս է մնում միայն փոքրիկ և աննշան մի հատուած, այն է՝ Հ. Յ. Դաշնակցութեան հետևողները, որոնք Ազգ. Բիւրոյի անունով աղմկում են ու տակն ու վրա են անում ամեն ինչ... և անուանարկիչ թռուցիկներով, [illegible] և զրպարտութիւններով խանգարում են հանգանակութիւնները և ներկայի շարժումները։

Ընդունելով որ Բիւրոյի խնկարկուները միայն դաշնակցականները և այն էլ չնչին փոքրամասնութիւն են, պիտի ասեմ այժմ, որ մեծամասնութիւնը իր շատ օրինական առարկութիւններով ժխտում է Ազգ. Բիւրոյի գոյութեան օրինաւորութիւնը, նրա իրաւասութիւնը և հետևաբար աշխատում է իր ոյժերը կենտրոնացնել այնպիսի ձեռքերի մէջ և այնպիսի մի մարմնի շուրջը, որը համազգային լինելու հանգամանքով ի վիճակի կը լինի ազգիս բազմակողմանի ցաւերը համազգային ըմբռնումով դարմանել, այլ ոչ թէ որևէ կուսակցութեան քմահաճոյքով։

Նա՝ ամերիկահայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը անվստահութեան քուէ է տուել Ազգ. Բիւրոյին և յաճախ հրաւէր է կարդացել մոլորված փոքրամասնութեանը, Դաշնակցութեան հատուածին, գալ և միանալ ընդհանուր հոսանքին, բայց վերից եկած հրահանգներն այլ կերպ էին տնօրինում... և հետևաբար պայքարը պիտի շարունակվէր և շարունակվում է, այն էլ չը տեսնված ու չը լսված զզուելի ձևերով, բայց ոչ թէ մեծամասնութեան, ասենք՝ Ազգ. Պաշտ. Միութեան կողմից։ Թէև պ. Ս. Վրացեանն ասում է, թէ մամուլը, մանաւանդ Ազգ. Բիւրոյի հակառակորդ մասը, միջոցների մէջ խտրութիւն չի դրել և բոլոր միջոցներն ընդունելի է համարել, միայն թէ միւս կողմը տուժի, բայց իրողութիւնն այն է, որ չը նայած դաշնակցականների բռնած անհաշտ դիրքին, Ազգ. Պաշտպ. Միութիւնը դեռ չի դադարում նրանց համերաշխեցնելու աշխատել, բայց սակայն ապարդիւն, որովհետև այդ փոքրամասնութիւնը իր փոքր ոյժերով աշխատում է ամեն ինչ ի շահ իր կուսակցութեան կենտրոնացնել Ազգ. Բիւրոյի մէջ... Եւ հէնց այդ նպատակի համար, երբ վերջերս Ազգ. Պաշտ. Միութեան նախաձեռնութեամբ Բօստոնի մէջ հսկայական հանգանակութիւն պիտի կատարվէր, ժողովասրահում ցրվում է Հ. Յ. Դ. մի անուանարկիչ թռուցիկը, որով կոչ էր լինում ժողովրդին փող չը տալ եւ սպասել... Սա դեռ կատարված տգեղ փաստերից մի նմուշ է։ Իսկ սրա նման դէպքեր անթիւ են։

Եթէ ամերիկահայութեան մէջ տեղի է ունեցել տգեղ պայքար, դրա 95%-ը պիտի վերագրել պ. Ս. Վրացեանի ակնարկած «մեծամասնութեան», այն է՝ Հ. Յ. Դ. փոքրիկ փոքրամասնութեանը, որ ինքն իրան ամբողջ հայութեան տէր և տնօրէն ճանաչեցնելու ամբարտաւան յաւակնութիւնն է միշտ ցուցադրել և այդ ձևով խանգարել ու խորտակել է ամեն մի ձեռնարկ, որ երևան է եկել ազգի ծով ցաւերը ամոքելու։ Սրա համար փաստերն անթիւ են, ու ես մանրամասնութեան մէջ մտնելու պէտքը չեմ տեսնում։

Թէ պ. Ս. Վրացեանը ամերիկահայութեան կեանքին վերաբերող փաստերը հարազատ կերպով չի ներկայացնում, դա ապացուցվում է նրանով, որ Ամերիկայի Ազգ. Պաշտ. Միութիւնը չէ թէ միայն տեղական համերաշխութեան սկզբունքին հակառակ դիրք չի բռնել և չը պիտի բռնէ, այլ նոյնիսկ իր ձեռնարկած և ամենքի սրտին այնքան մօտիկ համազգային համերաշխութեան իրականացումի ետևից ընկնելով նոյնիսկ այսօր պ. Ս. Վրացեանի աչքի առաջ և Կովկասի մէջ, իր ներկայացուցիչների ձեռքով ամենաանկեղծ փափագով և ջերմ եռանդով աշխատում է և գործում։ Իսկ եթէ պ. Ս. Վրացեանը և իրայինները Օլիմպեան բարձունքից անտես են առնում այդ բոլորը, թողէք այդպէս լինի։ Սակայն ջերմապէս հաւատացողներ կան, որ շուտով Կովկասն էլ, հանդէպ մեզ շրջապատող ահաւոր չարիքին արթնանալով, պիտի հետևէ Ամերիկայի Ազգ. Պաշտ. Միութեան և երևան դնէ համազգային այնպիսի մի կազմ, որն իր մէջ ունենար հայութեան ամբողջութիւնը կազմաւորող բոլոր հոսանքները և կուսակցութիւնները։

Եւ այսպիսի մի ամբողջական և լուրջ մարմինն է միայն, որ պիտի կարողանայ արդի մտայլաբարդ վիճակից որոշ երաշխիք ու գրաւական ձեռք բերել դժբաղդ ու հալածված հայութեան համար, այլ ոչ թէ միակողմանի, թայֆայական ու կուսակցական այնպիսի մի մարմին, որ բլըֆներով և արհեստական հէքեաթներով հիասթափութեան և յուսալքումի է մատնում բզքտված ու ծուատված հայութիւնը։

Պ. Ս. Վրացեանի յօդուածները ինձ զարմացրել են, թէ Կովկասը թողած ինչու համար է նա ձգվում մինչև Ամերիկա, այնտեղ համերաշխութեան յորդորներ կարդալու։ Արդեօք նա դիտմա՞մբ անտես է առնում թէ՞ չէ նկատում իրան շրջապատող քաօս իրականութիւնը և անհամերաշխութեան հրաբուխը։ Նա չի տեսնում Ազգային Բիւրօ կոչված մարմնի հանդէպ եղած համատարած անվստահութիւնը, նրա կամայական ձեռնարկութիւնների անաջողութիւնը, խլրտումը և վերջապէս նրա իսկ անմխիթար ու ցաւալի վիճակը։ Չի տեսնում թէ՝ Ազգային Բիւրոյից անկախ և հէնց նրա քթի տակ քանի-քանի բիւրոները, կօմիտէները և այսպէս ասած շտաբներ են գործում և կամայական գծեր ղեկավարում։ Արդեօք սրա՞նք էլ Ամերիկայի Ազգային Պաշտպանութեան պիտի վերագրել թէ Ազգային Բիւրոյի անժողովրդականութեան և վայելած անվստահութեան։

Ինչու պ. Ս. Վրացեանը չէ բարեհաճում նոյն համերաշխութեան յորդորները կարդալ, ինքը՝ որ հեռաւոր Ատլանտեանի ափունքի հայութեան համար է պատգամում այնքան սրտացաւօրէն։

Մեզ է յայտնի միայն, թէ ինչե՞ր կան ծածկված այդ բոլորի ստուերի տակ։

Վերջին խօսք։

Ամբողջ ամերիկահայութիւնը, բացի նրա մէջ եղող դաշնակցական հատուածը, պահանջում է և աշխատում ունենալ այնպիսի մի համազգային մարմին, որ իր մէջ առնելով հայ ազգը կազմաւորող բոլոր հոսանքները՝ կարողանայ խօսել ու գործել հայ ազգի անունով և նրա գոյութեան շահերի և ապահովութեան համար, այլ ոչ թէ համատարած թշուառութեան և արեան ծովի միջում փնտռել կուսակցական շահ ու չաղ-չաղ պաշտօններ հազարաւոր թայֆայականների համար։

Ամերիկահայութեան նպատակն է սրբել նահատակ հայութեան դառն արցունքը, այլ ոչ թէ շահագործել այդ արցունքը ի նպաստ կուսակցութեան և թայֆայական ներկայ և հեռաւոր նպատակների։ Եւ այդ իրականացած պիտի տեսնենք մենք շատ շուտով։ Թող վստահ լինի պ. Վրացեանը։

Սոկրատ Գելֆեանց

Թիֆլիս, 30 նոյեմ.

Կարդացի «Մշակի» մէջ պ. Lucifer-ի ըրած դիտողութիւնները դասախօսութեանս մէջ գործածուած «ազգային» և «ազգայնական» բառերու մասին։

Հարկ կը համարեմ յայտնել, թէ «ազգային» բառը գործածած եմ եւրոպական national բառի տեղ և «ազգայնական»՝ nationalist-ի տեղ։ Ամբողջ դասախօսութեանս մէջ և ոչ մէկ տեղ «ազգային» ըսած եմ, ուր «ազգայնական» պէտք էր ըսէի, կամ հակառակը։

Մ. Մինասեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Ուստր, 2 նոյեմ. (ն. տ.)

Սեպտեմբեր ամսուն սկիզբները ամերիկահայոց թեմակալ առաջնորդ Արսէն ծ. վարդ. Վեհունին թեմական այցելութեան ելաւ՝ արևմտեան միջին նահանգներուն մէջ հաստատուած հայ գաղթականութեանց կրօնա-բարոյական պէտքերուն մօտէն ծանօթանալու և տուեալ պայմաններուն տակ անոնց այդ պէտքերուն բաւարարութիւն տալու իր կարողութեան սահմանին մէջ։ Թեմակալ առաջնորդն իր այս այցելութիւնը օգտակար ընծայելու համար՝ ի միջի այլ խնդիրներու՝ զբաղած է և՛ հայուն ներկայ զարհուրելի տառապանքը ամերիկացիներուն ծանօթացնելու գործով։ Տեսակցութիւն ունեցած է Քլիվլենդի եպիսկոպոս Լէօնարդի, Դիթրօյիթի եպ. Ուիլըմզի, Գրէնդրափիդսի եպ. Մըքօրմիկի և Ֆիլադելֆիայի եպ. Բայլընդըրի հետ, ներկայացուցած է անոնց հայ ազգը ամբողջութեամբ Թիւրքիոյ մէջ բնաջնջելու համար թիւրք կառավարութեան գործադրած հրէշային գազանութիւնները և խնդրած իրենց բարոյական օժանդակութիւնը՝ Միացեալ Պետութիւններու կառավարութիւնն ստիպելու զօրաւոր միջամտութիւն մը ընելու նպատակաւ։ Ուրախ ենք, որ վերոյիշեալ եպիսկոպոսները խոստացած են չզլանալ կարելի ամեն օգնութիւն՝ Միջագետքի անապատներուն մէջ թափառող անտէրունջ հայորդիներուն կեանքը ազատելու և «անհետացած Հայաստանի» մնացորդ բեկորները գէթ իսպառ բնաջնջումէ փրկելու համար։ Խիստ մխիթարական է տեսնել, թէ այս նպատակաւ արդէն սկսած են քայլեր առնել Ամերիկայի զանազան կողմերը։

Ամերիկահայոց թեմակալ առաջնորդին ուղարկուած է հետևեալ որոշմնագիրը, զոր Ամերիկայի միջին արևմտեան նահանգներու եպիսկոպոսական եկեղեցիի սինոդը անցուցած է իրենց համաժողովին մէջ։

«Մենք, միջին արևմտեան նահանգներու սինոդի անդամներս, կը փափագինք մեր խորին համակրութիւնն յայտնել Հայաստանի մեր քրիստոնեայ եղբայրներուն, որոնք այս պահուս թշնամիին (թիւրքին) խուժդուժ և հակամարդկային վարմունքին ենթակայ դարձած են։ Թախանձագին կը խնդրենք այս սինոդին իւրաքանչիւր անդամէն, որ ոչ միայն տարաբաղդ հայ ժողովուրդին շուտափոյթ փրկութեան համար աղօթեն, այլ և իրենց ազդեցութիւնը գործածեն Միացեալ Պետութիւններու կառավարութեան վրայ, որպէսզի կարելի միջոց մը գտնուի այդ երկրին ներկայ արհաւրալի և ընդվզեցուցիչ պայմանները փոխելու։ Կը փափագինք յայտնել միանգամայն մեր սրտագին հաւանութիւնը նախագահ Ուիլսընին իր ցարդ առած քայլերուն համար վստահացնելով զինքը թէ՝ պիտի շարունակենք մեր աջակցութիւնը նուիրել իրեն, եթէ՝ ի դէպս անհրաժեշտութեան՝ նոր միջամտութեան մը պէտք տեսնէ։ Որոշուեցաւ, որ ներկայ բանաձեւէն օրինակ մը ղրկուի Ամերիկայի նախագահին, ամերիկահայոց առաջնորդին և այս սինոդին հետ կապ ունեցող բոլոր թեմերուն, և խնդրուի, որ այս թեմերը նմանօրինակ քայլեր առնեն հիմնուելով սոյն բանաձեւին վրայ»։

Բանաձեւին տակ ստորագրած են.- Եդուարդ Թօմէթ՝ եպիսկոպոս Քուինսիի Չ. Ց. Դօդլօն, աւագ-սարկաւագ Հարաւային Օհայօյի Ի. Վ. Եվըրըս, հովիւ Թրինիթի եկեղեցիին Սթ. Վէյն, Ինդ։

Յաջորդիւ ես կը հաղորդեմ մէկ քանի ուրիշ տեղեկութիւններ, ամերիկացիներուն մէջ հայ դատին ի նպաստ կատարուած գնահատելի գործունէութիւններու մասին։

* *

Ամերիկայի հայ գաղութներուն մէջ փափագ կը յայտնուի, որ Կովկասի զանազան կողմերը գտնուող հայ փախստական-գաղթականներէն այնպիսիները, որ հոս ազգական-բարեկամներ ունին, անուններն հրատարակել տան «Մշակի» մէջ, որպէս զի տեղեկութիւն ստացած ըլլան և նիւթական օգնութիւն փութացնեն։

Մաղաք Գ. Պէրպէրեան

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

Մուսունի Տէր-Ղուկաս քահանայի որդու՝ Գեղամ տէր-Ղուկասեանի, բնիկ Խուչ-Բէլլուէցի, 18 տարեկան, տեղը ով որ գիտէ, թող բարի լինի հաղորդել «Մշակի» խմբագրութեան գրասենեակին։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 53 ր. երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր. առաւ.
	Բօրժօմից	7 ժ. 35 ր. առաւ.

ԱՒԱԳՈՅՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ՕՂԼԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկհատ.։
ԻՐԻԿՈՒՆԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—209

ԲԺԻՇԿ
Ի. ԵԱ. ԳՕԿԻԷԼՕՎ
(Նախկին օրդինատոր Կալինկինեան հիւանդ. Պետրօգրադում)
Ընդունում է հիւանդներին վեներական, սիֆիլիս, կաշուի եւ ջղային հիւանդութիւններից։
Ամեն օր՝ { առ. ժամը 9½—12.
եր. » 5—7½.
Հասցէն՝ Միխայլովսկի պր. № 113.
(օ. մ.) 801. 12—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Իւզօվկայի հայոց աղօթատան համար հարկաւոր է մի փորձառու, աջող ձայնով, երիտասարդ
ՏԻՐԱՑՈՒ։
Պայմանները՝ 500 ր. արդիւնք և 5 ր. սենեակի վարձ։ Դիմել ինձ. Юзовка, (Екатер. губ.) հայոց քահանային։
Կարապետ ք. Դաւթեան
870. 4—2

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М·ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М·ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
(Հ. Կ.) 761. 50—11

! ՕԳՏՎԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ !
(Իմ գեղարուեստական արհեստանոցի գործի հետ ծանօթացնելու համար, կարճ ժամանակով նշանակում եմ սովորական գների կէսը, ամենքին մատչելի անելու)։
Մեծացնում եմ փոքր լուսանկարներից ամենաճիշդ նմանութեամբ
ԴԻՄՔԵՐ
ԻՒՂԱՆԵՐԿՈՎ ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ՍԵՒ ՄԱՏԻՏՈՎ
(Ձրի պատրաստում և ճանապարհածախսը)
14×11 վերշ. մեծ. իւղաներկով 15 ր., սև մատ. 10 ր.։
11×9 վերշ. մեծ. իւղաներկով 12 ր., սև մատ. 8 ր.։
9×7 վերշ. մեծ. իւղ. 8 ր., սև մատ. 5 ր.։
Պատուէրի հետ ուղարկել պատկերը. երեսի, մազերի, աչքերի և շորերի գոյները պէտք է բացատրել։
Ուղարկել գումարի կէսը, իսկ մնացած գումարը վերջից վճարով. պատուէրները կը ստացվեն 10 օրից յետոյ փոքր նկարի հետ։ Դիմել Тифлисъ, Сололаки, Крайній Подъемъ, № 8. Художнику П. Г. Джебеянцу.
ш. о. 857. 2—2

Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
Линчъ—Арменія շքեղ հր. 2 հատ. գ. 18 ր.
1906 և 1909 թ.թ. Գեղունի շքեղ հրատ. իւրաքանչիւրի գինն է 3 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ. 1 ր.
» Մատնիչ, պատմուածք 40 կ.
Շիրվանզադէ—Ցասազարը եւ ջնուդի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով)։ 50 կ.
» Ժողովածու երկերի I. II, III, և IV հատոր ամեն մինի գինն է 1 ր. 50 կ.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ 40 կ.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи 40 կ.
Ив. Саркисянъ—Армянск. литература 60 կ.
Վարդան Քամալեան—Հառաչանք (երկրորդ տպագրութիւն) 30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա քաղաք. փոխ յարաբերութիւնները 25 կ.
Նապօլէոնական պատկերներ [illegible] 50 կ.
Գր. Ալ. Մարտիրոսեան—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Լէյստէրի բժշկարանից կազմած)։ 1 ր.
Ս. Դոնիէլ Բէկ—Կանանց հարցը 20 կ.
Ա. Քոչմիշեան—Վարդավառ, կր. 2 արարուածով. 20 կ.
Զարթօղ—Զատկական զաներ 10 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ նովիտը 3 կ.
Յիշեալ բոլոր հրատարակութիւնները միասին պահանջողներին կը լինի զեղչ 25%։ Մինչև 1 րուբլի գումարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրայ։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15—12

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.
1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի . . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . . . 40 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.
(3) 0—11

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՎԱՆ-ՏՈՍՊ"
Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթը.
Բաժնեգինը Ռուսաստանում տարեկան 4 ռուբ., կէս տարվան 2 ր. 50 կ., ամսական 40 կ.։ Արտասահմանում տարեկան 15 ֆր., կէս տարվան 8 ֆր.։ Առանձին համարը արժէ 10 կ.։ «ՎԱՆ-ՏՈՍՊԻՆ» վերաբերեալ նամակները, հեռագիրները և դրամը պէտք է ուղարկել միմիայն խմբագրութեանը, հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Головинскій пр. № 41. Редакція арм. журнала «ВАН-ТОСП». Արտասահմանից՝ Rédaction du journal «Van-Tosp», Russie, Tiflis, Golovinski pr. № 41.
«Վան-Տոսպը» ունի իր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն չունի «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութեան հետ։
(օ. մ.) 874. 3—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.